

**Խմբային տների բնակիչների կարիքների գնահատման գեղերային  
համատեքստը  
Սոնա Գրիգորյան**

## Անոտացիա

«Խմբային տների բնակիչների կարիքների գնահատման գենդերային համատեքստը» հետազոտությունն ուղղված է ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծված խմբային տների բնակիչների կարիքների գենդերային վերլուծությանը, ինչպես նաև խմբային տների մատուցած ծառայությունների գենդերային զգայունության բացահայտմանը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անտոսացիա.....	2
Ամփոփ նկարագիր .....	4
Նախաբան .....	7
Մեթոդաբանություն.....	8
«Ձերմիկ անկյուն» հիմնադրամ .....	10
Ֆիզիոլոգիական կարիքներ	10
Կենցաղավարում և ինքնախնամք	10
Հոգեբանական կարիքներ/պահանջմունքներ	11
Սոցիալական կարիքներ	12
Բնակիչների նկատմամբ վերաբերմունք	13
Բնակիչների որոշումների կայացում	14
Գենդերային կարծրատիպեր (գենդերային զգայունություն և կարծրատիպերի նկատմամբ վերաբերմունք)	15
Բռնության նկատմամբ վերաբերմունք	17
Սպիտակի շուրջօրյա խնամքի տուն .....	20
Ֆիզիոլոգիական կարիքներ	20
Կենցաղավարում և ինքնախնամք	21
Հոգեբանական կարիքներ/պահանջմունքներ	21
Սոցիալական կարիքներ	22
Բնակիչների նկատմամբ վերաբերմունք	23
Բնակիչների որոշումների կայացում	23
Գենդերային կարծրատիպեր (գենդերային զգայունություն և կարծրատիպերի նկատմամբ վերաբերմունք)	24
Բռնության նկատմամբ վերաբերմունք	25
Ամփոփում և եզրակացություն.....	28
Առաջարկություններ .....	33
Գրականություն.....	35
Աբստրակտ .....	36
Abstract.....	36

## Ամփոփ նկարագիր

Մույն հետազոտությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծված չորս խմբային տների (այսուհետ՝ խմբային տներ) բնակիչների կարիքների գենդերային առանձնահատկությունների բացահայտմանը և նրանց տրամադրվող ծառայությունների գենդերային զգայունության վերլուծությանը: Աշխատանքը միտված է նպաստելու հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների առավել հասցեական բավարարմանը, նրանց ինքնաիրացման հնարավորությունների ավելացմանն ու նորերի զարգացմանը, ինչպես նաև կյանքի որակի բարձրացմանը: Հաջորդիվ ներկայացված է արդյունքների ամփոփ պատկերը՝ ըստ կարիքների:

### Ֆիզիոլոգիական կարիքներ

- 1) Հետազոտության ընթացքում վերհանված տվյալների համաձայն՝ բոլոր խմբային տներում բնակիչների ֆիզիոլոգիական պահանջումները հիմնականում բավարարվում են: Կանայք ավելի քիչ սննդային հավակնություններ ունեն, քան տղամարդիկ:
- 2) Անձնական տարածքի ընկալումները տարբեր խմբային տներում տարբեր են. ընդհանուր առմամբ, կանանց մեծ մասը գտնում է, որ չունի անձնական տարածք և կցանկանար ունենալ, մինչդեռ տղամարդկանց անձնական տարածք ունենալու հարցը շատ չի հուզում. նրանց մի մասը գտնում է, որ ունի անձնական տարածք, մյուս մասն էլ կարծում է, որ անձնական տարածքի կարիք չունի:

### Կենցաղավարում և ինքնախնամք

- 1) Օրվա օրակարգը նկարագրելիս իգական սեռի ներկայացուցիչների մեծ մասն անպայման նշել է նաև տան մաքրության հերթապահության մասին, մինչդեռ արական սեռի հարցվողներից շատ քչերն են նշել դրա մասին:
- 2) Որոշ խմբային տներում տղամարդկանց կենցաղավարման հմտությունների պակասը բացասաբար է գնահատվում իգական սեռի բնակիչների կողմից:

### Հոգեբանական կարիքներ/պահանջումներ

- 1) Չնայած բոլոր խմբային տների բնակիչների համար նախապես մշակված ժամանակացույց կա, որին հետևելը պարտադիր է, այդուհանդերձ բնակիչների մեծամասնությունը նշում է, որ իրեն ազատ է զգում այնտեղ: Ընդ որում՝ բոլոր կանայք իրենց ազատ են զգում, իսկ տղամարդկանց մի մասն իր ազատությունը որոշ առումով սահմանափակ է համարում:
- 2) Հարցվողների բացարձակ մեծամասնության պատկերացմամբ՝ բոլոր տներում ինքնուրույն ապրելու հավակնող բնակիչներն իգական սեռի են, մինչդեռ նույն այդ կանայք համոզված չեն, որ կարող են ինքնուրույն ապրել: Արական սեռի բնակիչների համար հարկավոր է կա՛մ աշխատողների, կա՛մ իրենց տանը բնակվող ինքնուրույնության բարձր աստիճան ունեցող իգական սեռի բնակիչների ներկայությունը՝ նվազագույնը կենցաղավարմանն առնչվող խնդիրների լուծման համար:
- 3) Բոլոր խմբային տներում կանայք ավելի շատ են գիրք կարդում, քան տղամարդիկ. վերջիններիս մի մասը կարդալ չգիտի, մյուս մասն էլ մոտիվացիա կամ բավարար տեսողություն չունի:

### Սոցիալական կարիքներ

- 1) Հարցվող բնակիչների վերաբերմունքը ֆորմալ աշխատանք ունենալու նկատմամբ տարբեր է. Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչների մեծամասնությունը մոտիվացված չի աշխատանք ունենալու առումով: Ի տարբերություն նախորդի՝ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի բնակիչները ոգեշնչվում են իրենց երբևէ աշխատող բնակիչներից և տնից դուրս աշխատելու պատրաստակամություն են հայտնում: Գենդերային տարբերությունն այստեղ ևս հոգուտ կանանց է. իգական սեռի աշխատել ցանկացող բնակիչների թիվը կրկնակի անգամ մեծ է:
- 2) Խմբային տներում նոր բնակիչներ ընդունելու դեպքում իգական սեռի նախընտրությունն է գերակշռում: Հարցվող բնակիչները տարբեր մեկնաբանություններ են ներկայացնում այդ առնչությամբ:

### **Բնակիչների նկատմամբ վերաբերմունք**

- 1) Բնակիչների մեծամասնության կարծիքով՝ աշխատողների վերաբերմունքն իրենց նկատմամբ դրական է, իրենց կարիքները հաշվի են առնվում աշխատողների կողմից ու համապատասխանորեն բավարարվում են: Հարցազրույցի մասնակիցները գտնում են, որ աշխատողների դրական վերաբերմունքն արտահայտվում է հատկապես կանանց նկատմամբ:
- 2) Ըստ հարցվողների՝ Խմբային տների աշխատողների կողմից խրախուսանքի մեծամասամբ արժանանում են կանայք:
- 3) Աշխատողների խորհուրդների նկատմամբ բնակիչների կողմից դրական վերաբերմունք է նկատվում. ըստ բնակիչների՝ ամեն ինչ արվում է իրենց օգնելու նկատառումով: Խմբային տունն ընկալվում է որպես իրենց տուն, այստեղ իրենք շատ հարմարված են, բավականին միջոցներ են ձեռնարկվել իրենց կարիքներին հնարավորինս արձագանքելու համար:

### **Բնակիչների որոշումների կայացում**

Բոլոր տներում իգական սեռի բնակիչների մոտ ակնհայտ է որոշումների կայացման գործընթացներին առնվազն մասնակից լինելը, ինչը չի նկատվում արական սեռի մոտ: Կան հարցեր, որոնց որոշումն ամբողջովին իգական սեռի բնակիչների կողմից է կայացվում, իսկ որոշ հարցեր էլ աշխատողների աջակցությամբ են որոշում: Արական սեռի բնակիչներն ավելի սակավ են մասնակցում որոշումների կայացմանը կա՛մ հմտության պակասի, կա՛մ որոշումների կայացման գործընթացից դուրս մնալու պատճառով:

### **Գենդերային տարբերություններ**

- 1) Խմբային տների աշխատակազմերի ներկայացուցիչներն ուղղորդում են բնակիչներին գենդերային դերերի ու պարտականությունների առումով, կիսվում են իրենց ունեցած պատկերացումներով և հանդիսանալով ռեֆերենտային անձինք՝ իրենց կողմից տրամադրվող վարքային մոդելները հարցվող բնակիչների մեծ մասի կողմից անվերապահ ընդունվում են:
- 2) Խմբային տների բնակիչների գենդերային դերերի վերաբերյալ մոտեցումները տարբերվում են միմյանցից. Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչների մեծ մասին բնորոշ է ավագ սերնդի մտածելակերպը և գենդերային դերերի ընկալումը, ինչը նաև հիմնավորվում է նրանց ֆիզիոլոգիական տարիքով և սոցիալականացման առանձնահատկություններով: Վերջիններիս մոտ գենդերային կարծրատիպերն ավելի ակտիվ են: «Ջերմիկ անկյուն»

հիմնադրամի բնակիչների մոտ գենդերային դերերի վերաբերյալ պատկերացումներն ավելի ճկուն են:

- 3) Վերոնշյալ գենդերային կարծրատիպերը դրսևորվում են խմբային տներում բնակվող կանանց և տղամարդկանց առօրյա կենսակերպում: Տղամարդիկ ավելի քիչ կենցաղային գործ են անում, քան կանայք, նրանցից ավելի քիչ են սպասելիքները:
- 4) Մայիտակի շուրջօրյա խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի իգական ու արական սեռի բնակիչների փոխհարաբերություններում ակնհայտ տարբերություն կա, քանի որ առաջինում տղամարդիկ գարնանից աշուն ժամանակահատվածում ակտիվ աշխատում են գյուղատնտեսության ոլորտում, ստեղծում են գյուղատնտեսական բարիք և դա դրական է գնահատվում կանանց կողմից. վերջիններս հանդուրժողաբար են վերաբերվում կենցաղային գործերում տղամարդկանց սակավ ներգրավվածությանը: Իսկ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի տղամարդիկ հողագործությամբ որքան էլ զբաղվեն, դա միայն կարող է ժամանցի բնույթ կրել, կոնկրետ սննդի ապահովման խնդիր չի լուծում:
- 5) Հարկ է նաև հաշվի առնել, որ հատկապես «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի արական սեռի բնակիչների իմացական կարողությունները շատ առումներով զիջում են իգական սեռին, ինչն անմիջականորեն ազդում է նրանց առօրյա կողմնորոշման, կենցաղավարման, ինքնախնամքի, հմտությունների մշակման և այլ ոլորտների վրա:

#### **Բռնության նկատմամբ վերաբերմունք**

- 1) Խմբային տներում բռնության կանխարգելման առանձին կանոններ չկան, ուղղակի բացատրվում է, որ չի կարելի անել:
- 2) Բնակիչների զգալի մասն առնվազն բռնության ականատես է եղել իրենց նախկին կեցության վայրերում: Մակայն խմբային տներում իրենց կեցությունը հարցվողների մեծամասնության ընկալմամբ անվտանգ ու ապահով է: Այդուհանդերձ, կանանցից մի քանիսը նշեցին, որ իրենց տան արական սեռի որոշ բնակիչներ անհանգստացնում են իրենց: Տղամարդիկ հիմնականում իրենց հարմարավետ են զգում խմբային տներում:

## Նախարան

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և իրավունքների իրացման հնարավորությունների հարցերին Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես անդրադարձ է կատարվել նախորդ տասնամյակներում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2010 թվականի սեպտեմբերին, որով պարտավորվել է մի շարք բարեփոխումներ իրականացնել հոգեկան առողջության ոլորտի ծառայությունների բնագավառում: Այդ նպատակով համապատասխան ռազմավարական փաստաթղթեր են մշակվել, որոնք նախատեսում են խնամքի մեծ հաստատությունների ապահովման փոփոխությունները՝ այլընտրանք հանդիսացող համայնքահեն ծառայությունների ներդրման և գործարկման միջոցով:

Վերոնշյալ բարեփոխումների շրջանակում 2016 թվականին ներդրվել է Սպիտակի շուրջօրյա խնամքի տուն համայնքահեն ծառայությունը՝ նախատեսված սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այստեղ բնակվելու նախապայման է շիզոֆրենիա ախտորոշումը:

Սակայն նմանատիպ կառույցի նախատիպը Հայաստանում առաջինն ստեղծվել է դեռևս 2005 թվականի դեկտեմբերին, երբ հիմնվել է «Ջերմիկ անկյուն» առաջին խմբային տունը: Այն նախատեսված է 25 տարին լրացած մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող ծնողազուրկ անձանց համար:

Զնայած իրենց թիրախ խմբերի տարբերություններին՝ երկու խմբային տունն էլ նպատակ են հետապնդում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ապահովել անհատական խնամքով, զարգացնել կյանքի կարևոր հմտությունները, նպաստել նրանց ինտեգրմանը՝ հասարակության մեջ ինքնուրույնության և ինքնախնամքի մակարդակի բարձրացման, կենցաղավարման հմտությունների զարգացման, միջանձնային շփումների հնարավորության ընձեռման, սոցիալական ներառման, ինչպես նաև համայնքի բնակիչների շրջանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի ձևավորման միջոցով:

Հայաստանյան հասարակությունը, բնորոշվելով որպես հարաբերականորեն պահպանողական, շարունակում է ակտիվորեն շրջանառել գենդերային կարծրատիպերի մոդելներ, համաձայն որոնց՝ կանանց ու տղամարդկանց վերագրվում են որոշակի գենդերային դերեր և նորմեր (Գևորգյան, 2011, էջ 9; Գևորգյան, 2014, էջ 30-31, 48, 121): Այս առումով գենդերային փոխհարաբերություններն առանցքային նշանակություն են ստանում հատկապես այն միջավայրերում, որտեղ կանանց և տղամարդկանց դերերի ստանդարտ բաշխումը վտանգում է և՛ կանանց, և՛ տղամարդկանց ինքնաիրացման հնարավորությունները:

Այս ազդեցություններից գերծ չեն մնացել բոլոր մեծ ու փոքր, փակ ու բաց կառույցները, քանի որ գենդերային փոխհարաբերություններն ամենուր են, դրանք դրսևորվում են բոլորի առօրեականության կառուցման գործընթացում (Թադևոսյան, 2016): Խմբային տները բացառություն չեն, և այս հետազոտությունն ուղղված է Հայաստանում առկա չորս խմբային տներում՝ Սպիտակի շուրջօրյա խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի երեք տներում բնակվող անձանց կարիքների գենդերային վերլուծությանը:

## Մեթոդաբանություն

**Նպատակ:** Այս որակական ուսումնասիրությունն ուղղված է խմբային տների մատուցած ծառայությունների գենդերային զգայունության բացահայտմանը, ինչպես նաև խմբային տներում բնակվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների գենդերային վերլուծությանը: Որպես այդպիսին, այս որակական ուսումնասիրությունը ձեռնարկվել է որպես նախնական քայլ՝ Հայաստանում խմբային տների ծառայություն ստացողների կարիքները գենդերային զգայունության տեսանկյունից ձևակերպելու համար, ուստի այն ներառում է հետևյալ հետազոտական հարցերը.

- 1) Որո՞նք են խմբային տների ծառայություն ստացողների կարիքների գենդերային առանձնահատկությունները:
- 2) Որքանո՞վ են խմբային տների ծառայությունները գենդերային առումով զգայուն:

**Ընտրանք:** Ընդգրկում է Հայաստանում գտնվող 4 խմբային տների՝ Սպիտակի շուրջօրյա խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի երեք տների բնակիչների: Ամեն տանը յուրաքանչյուր սեռային խմբից ընտրվել է մոտ 50%: Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը՝ 21 (n=21):

**Տևողություն:** Ներքոգրյալ վերլուծված տեղեկատվությունը վերաբերում է 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին բնակիչների կողմից տրամադրված տեսակետներին:

**Մեթոդաբանություն:** Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է ֆենոմենոլոգիական տեսության վրա, ինչը ենթադրում է հարցվողների սեփական ընկալումների արձանագրում: Ֆենոմենոլոգիական մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ գուցեև օբյեկտիվ իրականությունը գոյություն ունի, բայց դա այնքան կարևոր չի, որքան այն, թե մենք ինչպես ենք պատկերացնում այդ իրականությունը (Бергер и Лукман, 1995, с. 14, 17-19): Ուստի, պետք է գործ ունենալ ոչ թե այն իրականության հետ, որը գուցե գոյություն ունի բոլորից անկախ, այլ ինչպիսին դա հանդիսանում է հասարակական պատկերացում և ձևակերպվում ու կառուցվում է այդ հասարակական պատկերացումների ստեղծման ընթացքում (Шюта, 2003, с. 9, 61, 176): Մարդկային գիտելիքը անհատական ընկալման համար տրվում է ապրիորի, որն անհատին երաշխավորում է իմաստաբանական կարգ, ու թեև այդ կարգը կապված է սոցիալ-պատմական իրադրության հետ, այն անհատին թվում է աշխարհի ընկալման բնական միջոց (Бергер и Лукман, 1995, с. 9): Այսպիսով, գիտելիքների ցանկացած համակարգ դառնում է սոցիալապես ընդունելի՝ որպես իրականություն: Բայց ամենաեականն այն է, որ մարդը գիտի, որ աշխարհում գոյություն ունի մշտական համապատասխանություն իր գիտելիքների և դրանց նշանակությունների միջև և որ իր և մյուսների մոտ առկա է այդ իրականության ընդհանուր ըմբռնում (Бергер и Лукман, 1995, с. 19; Шюта, 2003, с. 15, 17, 25, 30, 261): Քանի որ իրականության այդ նշանակությունները կողմնորոշիչ գործառույթ են կատարում, հետևաբար դրանք անխուսափելիորեն անդրադառնում են մարդու «այստեղ և հիմա»-ի կազմակերպման վրա: Մեր իրականությունում այն մասնավորապես դրսևորվում է կանանց ու տղամարդկանց ունեցած դերերի վերաբերյալ կարծրացած պատկերացումների ընկալմամբ և դրա վրա հիմնված համապատասխան ակնկալիքներով ու վերջիններիս արձագանքող վարքով: Արդյունքում, կանանց և տղամարդկանց վարքի ու դերերի վերաբերյալ «մենք» խմբի սովորությունները դառնում են սոցիալական աշխարհի ընկալում, որոնք ընկալվում են որպես ժամանակի փորձություններին դիմակայած և հետևաբար, ընդունված միջոցներ, որոնք լինելով սոցիալապես հաստատված՝ չեն պահանջում բացատրություններ:



**Մեթոդ:** Որպես հետազոտության մեթոդ՝ ընտրվել է հարցազրույցը, որի ժամանակ կիրառվել է կիսաձևայնացված հարցաշար: Թեև կա հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների լավ մշակված ստանդարտացված գնահատումների շարք (Camberwell Assessment of Need (Phelan et al., 1995)), այնուամենայնիվ, այն հատուկ նախատեսված չէ սեռերի առանձին կարիքները գնահատելու համար: Ուստի, այս հետազոտության շրջանակներում մշակվել է խմբային տներում ապրող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների գենդերային առանձնահատկությունները բացահայտող կիսաձևայնացված (Semi-Structured) հարցաշար: Հարցաշարի բոլոր կետերն անցել են բազմամասնագիտական թիմի մանրակրկիտ գնում՝ հարցվողներին ամեն տեսակ բացասական ազդեցություններից ու վնասներից զերծ պահելու նպատակով: Հավաքագրված տեղեկատվությունը ներկայացվում է բացառապես անանուն՝ ընդհանրացված կերպով:

## **«Ջերմիկ անկյուն» հիմնադրամ**

Հայաստանում «Ջերմիկ անկյուն» հիմնադրամն առաջին խմբային տունն է՝ ստեղծված հաշմանդամություն ունեցող ծնողազուրկ անձանց համար: Ստեղծվել է 2005 թվականի դեկտեմբերին «Խաղաղության կորպուս» միջազգային կազմակերպության նախկին կամավոր Նատալյա Ռիզիերիի կողմից: Ծրագրի նպատակներն են՝ բնակիչներին ապահովել անահատական խնամքով, զարգացնել կյանքի կարևոր հմտությունները, նպաստել նրանց ինտեգրմանը հասարակության մեջ:

«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի երեք խմբային տներում բնակվում է 25 տարին լրացած մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող 30 բնակիչ:

Այս հետազոտության շրջանակում հարցվող բնակիչների թիվը 12-ն է, որոնցից 8-ը՝ իգական սեռի, 4-ը՝ արական: Տարիքային բաշխումը՝ 26-45: Բոլոր բնակիչներն ունեն հոգեկանի զարգացման տարբեր աստիճանների հապաղում և արձանագրված մտավոր հաշմանդամություն:

### **Ֆիզիոլոգիական կարիքներ**

Բոլոր բնակիչները գոհ են սննդից, նրանցից միայն մեկն է նշել, որ կցանկանար ավելի բազմազան սննդակարգ, մյուսները նշել են, որ ոչինչ չէին ցանկանա փոխել:

Հարցվող բնակիչները մեծամասամբ գոհ են իրենց քնից: Նրանցից միայն մեկն է հայտնել, որ սուրճ խմելուց իր քունը խանգարվում է, բայց չի կարողանում դադարեցնել, քանի որ դրա կարիքն ունի: Ֆիզիկական գանգատներ ունեն ևս երեք բնակիչ՝ սրտի, ոտքերի ցավեր, ատամնացավ և գլխացավ: Երեքն էլ հայտնել են աշխատողներին և համապատասխան միջամտություն են ստանում առողջական վիճակը կարգավորելու համար: Բացի երկուսից, մնացած տասը բնակիչները տեղյակ են իրենց դեղեր խմելու նպատակի մասին:

Իգական սեռի հարցվողների որոշ մասը և արական սեռի հարցվողների կեսը գտնում է, որ ունի անձնական տարածք, որտեղ կարող է մենակ մնալ ցանկության դեպքում, ընդ որում, բոլոր պատասխանողներից չորսը (երեքը՝ արական սեռի բնակիչներ) նշել են, որ չէին ցանկանա մենակ մնալ: Մա կարող է բացատրվել նրանց ինքնուրույնության և կենցաղում գործառնելու սահմանափակությամբ կամ առկա վախերով: Հարցվողներից միայն երկուսն են (մեկ իգական ու մեկ արական սեռի բնակիչ) նշել, որ կցանկանային փոխել անձնական տարածքը. «Մենյակը գեղեցկացնել, պատերը սիրունացնել, պահարան դնել (միջանցքում կա, բայց այն ընդհանուր է), կահույքը նոր լինել, ննջարանում սեղան լինել, ինչպես նաև բաղնիքում պահարան լինել՝ լոգանքի պարագաները դնելու համար»:

### **Վեցնցադավարում և ինքնախնամք**

Հարցման բոլոր մասնակիցները նշել են, որ կարողանում են ինքնախնամքի տարրական մակարդակ ապահովել իրենց համար, նաև կարողանում են իրենց սենյակն ինքնուրույն հավաքել:

**«Ինչպե՞ս եք Ձեր օրը սկսում, ի՞նչ եք անում»** հարցին իգական սեռի ներկայացուցիչների մեծ մասը պատասխանելիս անպայման նշել է տան մաքրության հերթապահության մասին, մինչդեռ արական սեռի հարցվողներից միայն մեկն է նշել դրա մասին որպես օրվա օրակարգի մաս. «Ես պարտականությունը կատարում եմ, մաքրություն եմ անում, հաճույքով եմ անում», «Բոլոր գործերն էլ անում եմ հաճույքով»:

Հարցման մասնակիցներից մեկն ընդգծեց, որ չեն կարող ինքնուրույն խանութ գնալ, «ավտոյի տակ կընկնեն», այդ պատճառով թեև բոլորը գումար ունեն, բայց ամեն օր չի, որ օգտվում են խանութից:

Գումարը հիմնականում հավաքում են ու սնունդ, հագուստ, կոշիկ կամ այլ անհրաժեշտ պարագաներ գնում են խանութից օգտվելու օրը:

Հանրային տրանսպորտից ոչ ոք չի օգտվում:

### **Հոգեբանական կարիքներ/պահանջումներ**

Չնայած «Ջերմիկ անկյուն» հինադրամի բոլոր տների բնակիչների համար նախապես մշակված ժամանակացույցին հետևելը պարտադիր է, այդուհանդերձ **«Արդյո՞ք բնակիչներն իրենց ազատ են զգում այս տանը. ինչպե՞ս է դա դրսևորվում»** հարցին բոլոր հարցվող բնակիչները դրական պատասխան են տվել: Նրանց ընկալմամբ իրենք շատ ազատ են և հանգիստ կարող են անել այն, ինչ ուզում են:

Դասընթացները, որոնց մասնակցում են բնակիչները, ներառում է գորգագործությունը, պապիե մաշեն, պարը, կավագործությունը: «Ես սիրում եմ գորգագործություն, որովհետև գումար ա գալիս, շուտով գալու ա ու վաճառում են էս գորգերը»:

**«Ի՞նչ դասընթաց/ների կուզեիք մասնակցել»** հարցին պատասխանել են. «Ճաշ պատրաստելու դասընթաց», «Կարուձև», «Պար, երգ, թատրոն, սպորտ», «Երգի, պարի խմբակ»:

Բնակիչներից մեկը ցանկանում է դիզայն, սեղանի ձևավորում սովորել, իսկ մյուսը ձեռագործ անել է ցանկանում սովորել, որ մյուսներին էլ կարողանա սովորեցնել: Մասնակիցներից երկուսը սպասում են նկուղի վերանորոգմանը<sup>1</sup>, որ կար անել սովորեն: Հարցման մեկ այլ մասնակից գյուղատնտեսության վերաբերյալ դասերի է ուզում գնալ:

**«Ըստ Ձեզ՝ այս տան բնակիչները կարո՞ղ են մենակ/ինքնուրույն ապրել»** հարցին տարաբնույթ պատասխաններ են հնչել. «Չեն կարող ինքնուրույն ճաշ եփել, իրենք թույլ են», «Չեն կարող, պիտի մարդ լինի հետը, ի վիճակի չենք», «Չեն կարող մենակ մնալ, առանց աշխատողի իրար կվնասեն»: Այսինքն՝ աշխատակիցները ոչ միայն ստանձնում են բնակիչների կենցաղավարման գործառնությունի աջակցողների դերը, այլև զսպում են միմյանց վնասելուց:

Հետաքրքրական է, որ հարցվող արական սեռի բնակիչներից ոչ մեկը չի նշել, որ կարող է մենակ ապրել, բայց նշել են ամենաինքնուրույն իգական սեռի ներկայացուցիչների անունները, որոնք, իրենց պատկերացմամբ, կարող են մենակ ապրել: Այնուամենայնիվ, նույն այդ իգական սեռի բնակիչները, որքան էլ որ ցանկության մակարդակում հաստատել են մենակ ապրելու մասին («Այո, ես մենակ սիրում եմ»), սակայն կարողության առումով ժխտել են մենակ/ինքնուրույն ապրելու իրենց հավանականությունը. «Ոչ, դեռ չենք կարող»: **«Կցանկանա՞ք տանը մենակ ապրել»** հարցին միայն երկու իգական սեռի հարցվող է դրական պատասխանել ու ներկայացրել, որ իսկապես մենակ կուզեր մնալ, մյուս դրական պատասխաններին հաջորդել է ինչ որ մեկի անունը, ում հետ բնակիչները կցանկանային մնալ (քույր, եղբայր, ընկեր): Հետազոտությանը մասնակցած բոլոր արական սեռի բնակիչները բացասաբար են պատասխանել տվյալ հարցին. նրանցից մեկը նշել է, որ կապրեր իրենց տան ամենաինքնուրույն իգական սեռի բնակչի հետ: Կարելի է եզրակացնել, որ իրենց ինքնուրույնության ձեռքբերման մասով դեռ անելիքներ կան անելու:

Ակնհայտ կապ կա նաև **«մարդիկ, ում ներկայությունը հարցվող բնակիչների համար կարևոր է, կուզեն, որ միշտ իրենց կողքին լինեն»** և **«տանն ո՞ւմ հետ են առավել շփվում»** հարցերի պատասխանների միջև. այստեղ ևս գերակայում են այն բնակիչների անունները, որոնք

---

<sup>1</sup> «Ջերմիկ անկյուն» հինադրամը նախատեսում է վերանորոգել նկուղն ու կարի մեքենաներ տեղադրել այնտեղ, որպեսզի բնակիչները նաև կարուձևով զբաղվեն:

հարաբերականորեն ինքնուրույն են: Հարկ է ընդգծել, որ իգական սեռի բնակիչներից բոլորը՝ բացի մեկից, նշել են ամենամտերիմ շփման օղակում միայն իգական սեռի ներկայացուցիչներին: Տղամարդկանցից որոշները նշել են նույն ինքնուրույն կանանց: Շատ հաճախ նախքան բնակիչներին նշելը՝ հարցվողները տալիս են աշխատողների անունները, նույնիսկ նախկին աշխատողների, ինչը հուշում է նրանց հուզական կապվածության մասին. «Աշխատողների հետ միշտ մտերիմ են»: Վերջինս ընտանիքի՝ ծնողների բացակայությունը փոխհատուցող գործառույթ է կատարում: Այստեղ աշխատակիցների մասնագիտական կոնֆլիկտներն են դուրս բերվում. «լինել մասնագետ, թե՛ մարդ»: Մասնագիտական էթիկան պահանջում է պահպանել մասնագիտական սահմանների շրջանակը, մինչդեռ էմպաթիայի կամ աջակցման պարտավորության իրենց ընկալումները հրահրում են դուրս գալ դրանից:

Հարցվող բնակիչների վախերը ներառում են հետևյալ երևույթները. վախ՝ մթությունից, սխալ թույլ տալուց, մահից, տարբերային աղետներից՝ երկրաշարժից, հրդեհից: Որոշները ոչնչից չեն վախենում: Իգական սեռի բնակիչների մոտ վախերն ավելի շատ են:

Բոլոր բնակիչները հեռուստացույց դիտում են: Ալիքները աշխատողներն են միացնում՝ հարցնելով վերջիններիս, իսկ նրանց ընտրությունը տարբեր է՝ կինոֆիլմեր, հաղորդումներ, սերիալներ, երաժշտություն:

Հարցվող կանանց կեսը կարդում է, իսկ տղամարդկանցից՝ ոչ ոք: Մա ևս նրանց իմացական գործընթացների ակտիվության որոշակի մակարդակի ցուցանիշ է, որն անխուսափելիորեն դրսևորվում է նրանց կյանքի բոլոր ասպեկտներում՝ սկսած ինքնախնամքից ու կենցաղավարումից, վերջացրած որոշումների կայացմամբ և իմացական պահանջմունքների բավարարմամբ. «Հաշվելը տղաները այդքան էլ չեն կարողանում, բայց աղջիկները կարող են», «Տղաները չգիտեն ոչ մի բան»: Տարբեր հետազոտություններով ապացուցված է, որ կարդալու կարողությունը դրական կորելացիա ունի մնացած իմացական գործընթացների հետ (McNamee, 2014; Ritchie et al., 2015), մասնավորապես, առանձնացվում է ուշադրության կետնրոնացումը, ընկալման պրոցեսների զարգացումը (di Tore et al., 2016), տարածական կողմնորոշումը, մտովի/ոչ վերբալ խնդիրների լուծումը (Fletcher et al., 2011) և այլք:

Որոշ բնակիչների մոտ հավանության, սիրված ու գնահատված լինելու պահանջմունքը նույնպես ակտիվ է, որը դրսևորվում է հարցերին տրվող պատասխանների արանքում խրախուսական արձագանքի ակնկալիքի մասին հուշող արտահայտություններում. «Լա՛ վ եմ պատասխանում», «Լա՛ վ եմ պատմում»:

## Մոցիալական կարիքներ

«Կցանկանա՞ք տանն այլ բնակիչներ գան ապրելու, քանի՞ հոգի, ի՞նչ սեռի, ինչու՞» հարցին կանանցից բոլորը՝ բացի մեկից, դրական են պատասխանել. «Աղջիկ, որովհետև իրանց հետ ընկերություն ենք անում, շփվում ենք», «Աղջիկներ. տղաները լավը չեն, լավ չեն մաքրում», «30 հոգի, միայն աղջիկներ»: Նմանատիպ տրամաբանությամբ է հիմնավորել նաև տղա բնակիչներից մեկը. «Աղջիկներ. աղջիկները օգնում են»: Որոշ իգական սեռի հարցվողներ, ինչպես և արական սեռի հարցվողների կեսը, ցանկանում են, որ նոր բնակիչները երկու սեռից էլ լինեն: Արական սեռի հարցվողներից միայն մեկն է նշել տղա բնակիչների ավելացման մասին. «Տղաներ, որովհետև տղաները քիչ են այստեղ, կուզեի շատանային»:

Բոլոր հարցվողներից միայն երկուսն են իրենց տեսակցողների թվում նշել բարեկամների, մյուսները նշել են մյուս տների բնակիչների, ինչպես նաև հարևանների մասին: Վերջիններս հիմնականում սեզոնային հյուրեր են, ավելի շատ ամռանն են այցելում ու շփվում իրենց հետ:

Իրենց շփման համար լրացուցիչ խոչընդոտ է նաև համավարակը. «Համավարակի պատճառով էլ չենք շփվում», «Հիմա չենք շփվում հիվանդության պատճառով, առաջ խաղում էինք բակում»:

Բոլոր բնակիչները՝ բացի մեկից, նշել են, որ տանը հեռախոս կա, բայց ոչ բոլորն են օգտվում դրանից. «Ես անձնական ունեմ», «Միայն ես ունեմ»: Առինջի բոլոր բնակիչները, ըստ հարցվողների, ունեն անձնական հեռախոս, սակայն ոչ բոլորն են օգտվում. «Անձնական հեռախոս, ծնունդի օրը բոլորը ստացել են, ոչ մեկի չեմ զանգում, սառած ա»: Մեկ այլ տան բնակիչ նշել է, որ կցանկանար անձնական հեռախոս ունենալ. «Ես հեռախոս չունեմ, կուզեի ունենալ, կզանգեմ, կխոսեմ, ինտերնետ կնայեմ»: Հիմնականում հեռախոսից օգտվելիս զանգում են Ջերմիկի մյուս տների բնակիչներին:

Բոլորը նշել են տներում ինտերնետ կապի առկայության մասին, սակայն բոլորից միայն մի հոգի է օգտվում դրանից, մյուսներն աշխատողների օգնությամբ են կարողանում գործածել ինտերնետը. «Երգեր ենք լսում, աշխատողներն են դնում, ես ձևերը չգիտեմ», «Այո, հեռուստացույցը ինտերնետով ա, երգեր ենք լսում»: Կարդալ-գրելու կարողության իրենց ունեցած մակարդակն ազդում է նրանց կյանքի այս կողմի վրա, սահմանափակում է ինքնուրույնությունը:

Տնից դուրս ինչ-որ տեղ վճարովի աշխատանք կատարելու հարցը քննարկելիս իզական սեռի բնակիչներից հինգը, իսկ արականից երեքն աշխատելու ցանկություն է հայտնել: Ընտրած աշխատանքային ոլորտներն են՝ արձաբանում մատուցող, մաքրող, ձեռքի աշխատանքի դասավանդող, գորգագործ, խոհարար. «Տաշիր պիցցայում պիցցա սարքել, համբուրգեր»: Բնակիչներից մեկը տարածության մեջ չի կարողանում կողմնորոշվել, այդ պատճառով չի կարող գնալ աշխատելու: Մեկ այլ բնակիչ էլ նշել է իրենց տան ամենաինքնուրույն բնակչի աշխատելու հավանականության մասին. «Նա կարող է աշխատել, բայց պետք է տրանսպորտից օգտվել սովորի ն մարդկանց հետ շփվել իմանա»:

Բնակիչներից մեկն իսկապես սպասում է նոր առաջարկի, որպեսզի նորից սկսի աշխատել. «Ես ունեմ հեռախոս, խանութի տիրոջն եմ զանգում, զրուցում ենք գործի մոմենտով, օգնում եմ ընդեղ, էլի եմ գնացել»: Առինջի տանը որոշ բնակիչների աշխատանքային փորձառությունը խթանում է մյուսների ոգևորությունը, որպեսզի իրենք էլ ցանկանան աշխատել:

**«Ավելի շատ տղամարդի՞ կ են տնից դուրս գալիս/ ինչ որ տեղ գնում, թե՞ կանայք»** հարցին բոլոր իզական սեռի բնակիչները պատասխանել են՝ միասին են գնում: Տղամարդ հարցվողների կեսը գտնում է, որ իրենք ավելի շատ են դուրս գալիս տնից. դա, հավանաբար, պայմանավորված է նրանց աղբ թափելու պարտավորությամբ:

## **Բնակիչների նկատմամբ վերաբերմունք**

Հարցվողների մեծ մասն աշխատողների կողմից խրախուսանքի արժանանում է գրեթե ամեն օր՝ լավ արված պարտականությունների համար: **«Այս տանը տղանե՞րն են ավելի շատ խրախուսանքի արժանանում, թե՞ աղջիկները»** հարցին իզական սեռի բնակիչների մեծ մասը նշել է, որ իրենք են արժանանում. «Աղջիկներին են շատ լավ բաներ ասում, մեկ-մեկ էլ տղաներին, բայց եթե տղաները սխալ բան են անում, իրանց վրա ջղայնանում են», «Աղջիկներն են ամեն ինչ անում. մաքրությունը մենք ենք անում, տղաները ոնց որ մեր մինիստրները լինեն, ոչ գործ են անում, ոչ էլ, իրենց սենյակը մենք պետք է մաքրենք, անկողինը մենք պետք է հարդարենք, իրենց շորերը մենք պիտի ծալենք, սիրուն դնենք դարակների մեջ», «Աղջիկները շատ լավ են անում, տղաների մասին չեմ կարող ասել», իսկ տղաների կեսը նշել է, որ աղջիկներին են ասում խրախուսանքի խոսքեր. «Աղջիկները, որովհետև իրանք մաքրությանը հետևում են», «Աղջիկներին, որովհետև աղջիկները շատ են»:

Տղամարդկանցից միայն մի հոգի է գտել, որ իրենք են արժանանում խրախուսանքի խոսքերի: Ամեն խբից մեկական հոգի կարծում է, որ հավասար են արժանանում խրախուսանքի:

Տան կանոնները խախտելու դեպքում կիրառվող «պատիժը» աշխատողների կողմից տրամադրվող ապլիկացիոն գործիքի՝ ոտնաթաթի<sup>2</sup> ջնջումն է ու դրա արդյունքում՝ անակնկալը ստանալու մերժումը. «Եթե աշխատողին վատ բառ են ասում, չներկած են տալիս», «Եթե վատ բառ են ասում, դա կանոնի խախտում աս», «Պատժվում է աշխատողի կողմից՝ ասում է այլևս այդ կանոնը չխախտես»: Իգական սեռի հարցվողներից միայն երեքը, իսկ արականից միայն մեկը նշեց, որ իրենք կանոն չեն խախտել: Մեծ մասը խոստովանեց, որ երբևէ «սխալ բան է արել ու անակնկալը չի ստացել»: Անակնկալները հիմնականում լինում են գրենական պիտույքների տեսքով՝ ներկելու գիրք, գունավոր թուղթ, մատիտ, գրիչ. «Խնամողներն են որոշում՝ ինչ տան որպես անակնկալ»:

Իգական սեռի հարցվող բնակիչներից որոշները նշել են՝ արական սեռի բնակիչներից ոմանք իրենց անհանգստացնում են, իսկ վերջիններն իրենց հարմարավետ են զգում տանը. «Բոլորի հետ լավ եմ զգում», «Այստեղ ապահով տեղ աս», «Ոչ մի բանը բռնություն չի, մեզ այստեղ օգնում են, խորհուրդ են տալիս, բռնություն չկա»:

Աշխատակիցները նաև բնակիչների հուզական աջակցության ապահովմանն են մասնակցում. «Մի քիչ նեղվում եմ, մի քիչ լացում եմ, աշխատողի հետ կիսվում եմ, ինձ հանգստացնում աս, լավ խորհուրդներ աս տալիս»:

## Բնակիչների որոշումների կայացում

Ըստ հարցվող բնակիչների՝ իգական սեռի մոտ զգացումը, որ իրենք են որոշումներ կայացնում, ավելի շատ է ու ավելի շատ ուղորտներ է ընդգրկում՝ երբ ու ինչ ուտել, երբ քնել, երբ դուրս գալ զբոսանքի, զբաղվել ուզած բանով, քան արական սեռի մոտ է դրսևորվում: Բոլոր հարցվողները համոզված են, որ լավ է, որ կան մարդիկ, որոնք օգնում են իրենց որոշում կայացնելիս. «Կան բաներ, որ մենք չենք կարող, օրինակ՝ գազօջախից կաթսան վերցնելը», «Բոլոր աշխատողներն օգնում են, առանց նրանց չեմ կարող, դժվար է», «Բոլոր աշխատողներից շատ գոհ եմ»: Այստեղ մեկ անգամ ևս ընդգծվում է աշխատակիցների կարևորությունը նրանց կյանքում՝ առօրյա հարցերից մինչև ավելի գլոբալ հիմնախնդիրների լուծման առումով:

**«Եթե Ձեզ ասեին զբաղվեք միայն նրանով, ինչով որ սիրում եք, ի՞նչը կլիներ դա»** հարցի պատասխանները վերաբերում էին հիմնականում իրենց առօրյա անելիքներին՝ խոհարարություն, գորգագործություն, կարպետագործություն, պապիե մաշե կամ մաքրամե, նկարել, երգել, խաղալ: Քանի որ շատ ընտրության հնարավորություն չեն տեսել, նշել են իրենց ծանոթ գործողությունները, չեն կարող նոր բաներ ցանկանալ:

Հարցման մասնակիցներից բացարձակ բոլորը կարծում են, որ իրենց տների բնակիչների բոլոր կարիքները բավարարվում են. չկան կարիքներ, որ ինչ-ինչ պատճառներով չեն բավարարվում:

Այնուամենայնիվ, բնակիչներից մի քանիսը ներկայացրել են իրեր/պարագաներ, որոնք կցանկանային ունենալ՝ անձնական հեռախոս, գորգագործության դազգահ, նոր գազօջախ (որ խմորեղենը լավ պատրաստվի), կարի մեքենա, նոր հեռուստացույց, սեղան, պահարան: Բոլոր իրերը վերաբերում են կենցաղին, ու ոչինչ չի հուշում նրանց արտատնային ակտիվության մասին, ինչը նաև այդ ակտիվության սակավության/բացակայության մասին է վկայում:

---

<sup>2</sup> Ապլիկացիոն գործիքը տեսքով նման է ոտնաթաթի, այդ պատճառով էլ բնակիչներն անվանում են «ոտնաթաթ»:

## **Գենդերային կարծրատիպեր (գենդերային զգայունություն և կարծրատիպերի նկատմամբ վերաբերմունք)**

Այս բաժնի հարցերը ներկայացնում են հարցվող բնակիչների ընկալումներն իրենց գենդերային դերի, ինչպես նաև այդ դերին վերագրվող ակնկալիքների և պարտականությունների վերաբերյալ: «**Եթե Ձեզ հնարավորություն տային ընտրելու, ապա՝ աղջիկ կծնվեիք, թե՞ տղա**» հարցի դեպքում բոլորն ընտրել են իրենց սեռը, սակայն տվել են ամենատարբեր գենդերային մեկնաբանություններ. «Որովհետև աղջիկը պետք է, որ կարողանա իրա ծնողին օգնի, մայրիկին օգնի, ես այստեղ աշխատողներին եմ օգնում», «Տղեն պետք է աղջկան պաշտպանի», «Աղջիկը լավն է, մաքրասեր է, տղան այդքան մաքրասեր չի, ինչքան աղջիկը, դպրոցում տեսել եմ՝ իրենց հիգիենան չեն պահում», «Աղջիկը սիրուն շորեր է հագնում, մազերը լավն են, զարդեր է կրում, սիրուն կոշիկ», «Աղջիկը լավ է ամեն ինչով, գեղեցիկ է հագնվում», «Տղա, տղան լավ է, խելոք է», «Աղջիկներին առանձին սենյակ են տալիս», «Տղա, որտեղ տղեն լավ է, էն առիթով՝ աղջկան պաշտպանում է»:

«**Ըստ Ձեզ գոյություն ունի՞ տղայի գործ, աղջկա գործ**» հարցի պատասխաններից որոշները դուրս են բերում մեր հասարակությունում տարածված կենցաղավարման ոլորտի որոշ կարծրատիպեր, սակայն որոշ պատասխաններ էլ չեղարկում են դրանք. «Տղու գործը փայտ կտրելն է, իսկ աղջկանը՝ մաքրել, սրբել», «Տղայինը ծանր բաներն են, իսկ աղջիկներինը՝ թեթև. սրբել, ավելել», «Քանդակելը լինում է տղամարդիկ, փայտագործություն, աղջիկները կարող են նկարել», «Տղայի գործ է անում եմ՝ խոհանոցն էմ լվանում, փայլացնում եմ, աղջիկների գործ է շոր փռելը», «Աղջկա գործն է մաքրություն, տղայի գործը ավելել, սրբել, դասավորել»: Ընդհանուր առմամբ՝ բնակիչներն ընկալում են, որ կենցաղավարման պարտականություններ անելիս տղամարդիկ օգնողի դերում են, դա իրենց գործառնական տիրույթը չի, հետևաբար պատասխանատվությունն էլ շատ մեծ չի արված աշխատանքի նկատմամբ. «Ես էլ եմ անում, աղջիկներն էլ են անում, օգնում եմ, որ աղջիկներին բան չլինի», «Տղաները օգնում են, ես սեղանն եմ մաքրում, տղեն հատակն է ավելում»:

«**Այս տանը կա՞ դերերի բաշխում, թե աղջիկներն ինչ պիտի անեն, իսկ տղաները՝ ինչ**» հարցին բացարձակ մեծամասնությունը դրական պատասխան է տվել, ինչը հիմնավորվում է նաև նախորդ հարցերի մեկնաբանություններում: «Աղջիկները կարան ճաշ եփեն, լվացք փռեն, ավելեն, տղաները փոշիներն են վերցնում, հատակն են սրբում», «Աղջիկները կարան ճաշի մասնակցեն, մաքրությանը մասնակցեն, ձեռքի աշխատանք, տղաներն էլ կարան գնան հողամասը մշակեն», «Տղաները ավելում են հատակը, սրբում են, բակը, տանը», «Աման լվանալը տղու գործ չի, տղաները մենակ ավելում են, սրբում են, փոշիները վերցնում են, սան. հանգույցը տղաներն էլ են անում», «Տղաներն են աղբը թափում, կարտոֆիլ են մաքրում, կաղամբ են կտրում»:

Կենցաղավարման, ինչպես և այլ հարցերում աշխատակազմի դիրքորոշումները վերարտարդվում են նաև բնակիչների կյանքում և առօրյայում. «Դե մեր աշխատողները միշտ հերթապահության մասին ասում են», «Աշխատողն է որոշում՝ ինչ անենք»:


Տղամարդկանց կեսն է կարծում, որ հավասար են անում կենցաղային գործերը, մյուս կեսը գտնում է, որ կանայք են ավելի շատ տան գործ անում, իսկ կանանց կեսը գտնում է, որ իրենք են շատ կենցաղային գործերում ներգրավված. «Աղջիկներն են շատ տան գործ անում, մենք տենց ենք որոշել աշխատողների հետ, տղաները օգնում են», «Որտեղ իրանք շատ են սիրում գործ անել... տղաները մեկ-մեկ անում են»:

Հարցվող բնակիչների մեծամասնությունը նախընտրում է, որ իրենց աշխատակազմում կանայք շատ լինեն. «Կանայք լավն են»: Միայն որոշներն են նշել, որ կուզեին տղամարդիկ էլ շատ լինեին. «Կուզեի լինեին, տղամարդիկ պետք են, որ Աստված չանի՝ գող մտնի...», «Այո, տղամարդը տանում-

բերում և մեքենայով, սպորտի և տանում, վարժություն են անում», «Կուզեի տղամարդիկ շատ լինեին, որտեղ տղամարդիկ քիչ են, միայն 3 հոգի»:



Աղյուսակ 1.



«Աղյուսակ 1»-ում ուղղահայաց առանցքը ներկայացնում է հարցման մասնակիցների թիվը, իսկ հորիզոնականում տեղ են գտել պարտականությունների մասին պնդումները՝ յուրաքանչյուր սեռի կողմից տրված պատասխանով: Ըստ աղյուսակի՝ իգական սեռի հարցվողների մեծ մասը գտնուում է, որ միայն կանայք կարող են ճաշ պատրաստել և լվացք անել. միայն տղամարդիկ ոչինչ չեն կարող անել: Տուն մաքրել և սովորել կարող են ն' կանայք, ն' տղամարդիկ՝ ըստ բոլոր հարցվողների: Այնուամենայնիվ, տղամարդկանց մաքրության չափանիշները կասկածի տակ են դրվել իգական սեռի հարցվողներից գրեթե բոլորի կողմից. «Լավ է, որ աղջիկներն են շատ տան գործ անում, քանի որ տղաները մի քիչ... իրենք մի քիչ լավ չեն մաքրում, կեղտոտ է մնում, իսկ աղջիկները մաքուր են անում», «Աղջիկները՝ աշխատասեր, գործ անող, մաքրասեր, տղաները ակкуратный չեն, փնթի են, իրենք մեկ-մեկ են գործ անում, մենք անում ենք, ես շատ եմ անում»: Մեծ մասամբ արական սեռի բնակիչներն իգական սեռի կողմից ընկալվում են որպես անգործունյա, անկամ և կարողություններից զուրկ. «Տղերքը ոչ մի բան էլ չեն անում», «Տղաները նստում են մենակ, ոչ մի բան չեն անում»:

Գենդերային կարծրատիպերը վառ արտահայտված են նաև նրանց պատկերացրած ընտանիքի կառուցվածքում. «Տան գործ անում են միայն աղջիկները, պապան գործի ա գնում-գալիս, իսկ մաման՝ աման-չաման, տան գործ», «Տղան գնում է գործի, չի կարա էրեխուն խնամի»:

«Արդյո՞ք տարբերվում են իգական ու արական սեռի բնակիչների կարիքները» հարցին իգական սեռի հարցվողներից հինգն են պատասխանել դրական, իսկ արական սեռի հարցվողներից՝ երեքը. «Մեկ-մեկ եղել ա. աղջիկները քավելիք են ստացել, տղաները՝ ակնոց, գրիչ, այլում», «Նույն բանն են սիրում»:

**Բռնության նկատմամբ վերաբերմունք**


Հարցվողների կեսը նշել է, որ բռնության ականատես չի եղել, իսկ մյուս կեսն էլ նշել է՝ եղել է:

Բոլոր հարցվողներից չորսը նշել է նախկին բնակավայրերում բռնության ենթարկվելու փորձառության մասին:

**«Համամի՞տ եք, որ մարդկանց առանց ֆիզիկական ուժի անհնար է սաստելը/կարգուկանոն սովորեցնելը»** հարցին տրվել են հետևյալ պատասխանները. «Եթե սխալ բան ա անում, բացատրում են, չեն ծեծում, պիտի չծեծեն, եթե չի հասկանում, պիտի ջղայնանան, ծեծեն՝ էդ սխալ ա», «Ծեծելով չի կարելի, մարդը ծեծելով չի հասկանում, ավելի ագրեսիվանում ա», «Ծեծելը ճիշտ չի», «Չի կարելի»:

Աղյուսակ 2.

### Որո՞նք են Ձեզ համար բռնության դրսևորում



«Աղյուսակ 2»-ում նույնպես ուղղահայաց առանցքը ցույց է տալիս հարցվողների քանակը, իսկ հորիզոնականը ներկայացնում է հարցվող բնակիչների վերաբերմունքը բռնության որևէ տեսակի նկատմամբ: Դրանում ինչ որ բան անել արգելելու վերաբերյալ հետաքրքիր մեկնաբանություններ

են հնչել. «Եթե սխալ բան ա անում՝ բռնություն չի», «Եթե հանգիստ են ասում՝ բռնություն չի, եթե կռախտ են ասում՝ բռնություն է»: Հարկ է նշել, որ արական սեռի հարցվողների ոչ բոլոր պատասխաններն են արժանահավատ:

**«Ինչպե՞ս եք Դուք վարվում, երբ բնակիչներից որոշները վիճում են, կռվում կամ հարձակվում են միմյանց վրա»** հարցին պատասխանել են, որ հիմնականում դիմում են աշխատողների աջակցությանը, որ բաժանեն կռվողներին. «Այստեղ էրեխեքը շատ կռվարար են», «Ոչ մեկի վրա պետք չի ձեռք բարձրացնել»: Մի հարցվող խոստովանել է, որ ինքն էլ է կռիվներ անում. «Մեկ-մեկ ջղայնանում եմ, հարձակվում եմ, կաշում եմ, հետո ասում են՝ չի կարելի, մի՛ արա», մյուսները նշել են. «Եթե մեկը ոտքով խփում է մյուսին, դա կոչվում ա կանոնի խախտում, ինքը խաչ ա ստանում ու անակնկալ չի ստանում», «Ես չեմ վիճում, ես աղջկա հետ ձեռք չեմ բարձրացնում»:

**«Այս կառույցում բռնությանը արձագանքելու կանոն կա՞»** հարցին միայն երեքն են դրական պատասխանել. «Անձնական տարածքի խախտում է, չներկած են ստանում»: Այստեղ դարձյալ հղում է արվում ապլիկացիոն գործիքին՝ ոտնաթաթին, որը չներկելու դեպքում օրվա անակնկալը չեն ստանում: Տան որևէ կանոն խախտելիս բնակիչները ստանում են ոտնաթաթի այն տարբերակը, որը ներկել հնարավոր չէ:

## Մայիտակի շուրջօրյա խնամքի տուն

2013 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ.» ծրագրի շրջանակում<sup>34</sup> նախատեսվել է հանրապետության երկու համայնքում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն, որը պետք է ՀՀ-ում առկա նյարդահոգեբանական տուն-ինտերնատներին այլընտրանք հանդիսանալ (Թեմուրյան, 2017):

Վերոնշյալ ծրագրերի իրականացման շրջանակներում 2016 թվականի ապրիլին ստեղծվեց Մայիտակի շուրջօրյա խնամքի տունը, որում նախապես բնակվել է 16 անձ: Թեև սկզբում այն պետությունը չի ստեղծել, այնուամենայնիվ հիմա պետության կողմից ֆինանսավորում ունի: Խնամքի տան նպատակն է՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույնության և ինքնախնամքի մակարդակի բարձրացումը, կենցաղավարման հմտությունների զարգացումը, միջանձնային շփումների հնարավորության ընձեռումը, սոցիալական ներառումը հասարակություն, համայնքի բնակիչների շրջանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի ձևավորումը: Այժմ այնտեղ բնակվում է 18 անձ:

Հարցվող բնակիչների թիվը՝ 9, որոնցից 5-ը իգական սեռի, 4-ը՝ արական: Տարիքային բաշխումը՝ 32-59: Բոլոր բնակիչներն ունեն հոգեբուժական ախտորոշում: Հարցվողներից 2-ը ճանաչված են անգործունակ:

### Ֆիզիոլոգիական կարիքներ

Մենդից ավելի շատ կանայք են գոհ, քան տղամարդիկ: Վերջիններս ավելի շատ բազմազանություն են ցանկանում սննդակարգում՝ միննույն ժամանակ գիտակցելով, որ բավարար ֆինանսավորում չկա, այդ պատճառով սննդակարգն ավելի համեստ է:

Հարցվողների գերակշռող մասն իր անձնական տարածք է համարում իր սենյակը, մնացածն անձնական տարածքի կարիք չեն զգում և գտնում են, որ մարդիկ չեն խանգարում: Նրանք մեծամասամբ բավարարված են իրենց անձնական տարածքով: Միայն որոշ իգական սեռի ներկայացուցիչներ են ընդգծել սենյակների էսթետիկ բարելավման անհրաժեշտության մասին: Մեկ անձ նշել է սենյակի մակերեսի փոքրության մասին, որ երեք բնակչով են կիսում տարածքը:

Բոլոր բնակիչները գոհ են իրենց քնից: Նրանցից միայն մեկն է նշել, որ կուրեր առավոտյան մի քիչ ուշ արթնանալ: Մեկ այլ բնակիչ էլ նշել է, որ դեղերի սխալ չափաբաժնից անհանգիստ է քնում:

Տաք հագուստի և կոշիկի կարիք միայն մեկն է նշել, որ ունի: Մյուսները բավարարված են ունեցածով:

Բնակիչների մեծ մասը նշել է, որ տանը տաք ջուր կա, թեև ավելացրել են, որ միայն լոգանքի օրն են միացնում այն: *Տպավորություն է, որ իրենք մտավախություն ունեն որևէ բացասական բան ասել տան մասին, որպեսզի այն չփակվի:*

---

<sup>3</sup> Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83190>

<sup>4</sup> Հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների. ծրագիր <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85539>

**«Կա՞ որևէ բան, որի կարիքն ունեք, բայց ոչ ոք չգիտի դրա մասին»** հարցին տարբեր պատասխաններ են տվել. մասնավորապես նշվել է, որ կուզեին անհատական տան մեջ ապրել, տաք հագուստի և սննդի կարիք կա: Բնակիչներից մեկն էլ նշել է, որ կցանկանար՝ դեղերի չափաբաժինը քչացնեն կամ ավելի ժամանակակից դեղեր նշանակեն, որ չտանջվի, չի կարողանում քնել, մկանները ձգվում են, շնչառության հաճախացում ունի այժմյան դեղերից:

**«Կա՞ որևէ բան, որ կուզեիք լիներ Ձեր տանը, բայց դեռ չկա»** հարցի պատասխաններն առանձնահատուկ են. «Դե մեր պետությունը հարուստ չի, որ մեզ լավ նայեն, բայց դե ինչ հնարավոր ա, տանում են՝ խանութից գնում ենք», «Արևային համակարգ լիներ, հոսանքի գումարը շատ չէին մուծի», «Անզլերենի ուսուցիչ, լեզուների ուսուցիչ», «Լավ հագուստ», «Կիթառ»:

Բոլոր ինքն հարցվողներից միայն երկուսն են նշել դեղեր խմելու նպատակի մասին՝ հոգեկան առողջության խնդրի պատճառով են խմում:

### **Կենցաղավարում և ինքնախնամք**

Բոլոր հարցվողները փաստել են ինքնախնամքի և կենցաղավարման որոշակի հմտությունների առկայության մասին:

Ի լրումն մնացած անելիքների՝ բնակիչները ցանկանում են մեքենա կամ հեծանիվ վարել սովորել, մարզասրահ հաճախել, պարել, կարուձև սովորել: Արական սեռի բնակիչներից որոշները նշել են, որ կցանկանային՝ ծխելն ավելի շատ լիներ:

Ցանկություն են հայտնել նաև վերանայել ամեն օր մաքրության հարցը (մասնավորապես՝ ավլելը), «բայց դա պարտադիր է»:

### **Հոգեբանական կարիքներ/պահանջմունքներ**

Հարցվողների կեսից ավելին գտնում է, որ բնակիչներն ազատ են խնամքի տանը: Ու թեև ունեն հստակ օրակարգ և շատ բաներ կարող են անել միայն աշխատողից թույլտվություն վերցնելուց հետո, այնուամենայնիվ, դա չի խաթարում իրենց ազատության ընկալումը. «Գորելեն են գործում, հիմա կորոնա է, մի քիչ այլ է, բայց առաջ ինքնուրույն դուրս էինք գալիս, ես գնում էի գրադարան... քեզ մարդ ես զգում, նենց չի, որ փակված ես»:

Հարցման մասնակիցները ցանկություն են հայտնել սովորել օտար լեզուներ, համակարգչային հմտություններ, կարուձև, իրավագիտական ու մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքներ, իսկ նոր սովորած հմտություններից նշել են գորբելենը, օրիգամին, գյուղատնտեսության հմտությունները:

Հարցվողների կեսից ավելին ցանկանում է տանը մենակ ապրել, քանի որ այդպես իրեն ավելի ազատ կզգա. «Տանն ավելի լավ ա, կարող ես ինչքան ուզում ես՝ սուրճ խմել», «Ազատությունները շատ են սեփական տան մեջ, դուրս կգնայի, խանութ կգնայի ավելի հաճախ, սնունդ կգնեի», «Ինչ էլ լինի՝ չես կարող քեզ այնքան ազատ զգալ, ինչպես քո տանը», «Չէ՛, տանը ուրիշ ա, սենց ուրիշ ա, ազատ դուրս արի, քո առևտուրն արա, արի տուն...»: Նույն հարցին բացասական պատասխանաձևերից երկուսը նույնպես իրենց տեսնում են տանն ապրելիս, բայց ոչ մենակ. «Կուզեի ընտանիք լիներ, կամ ընկերներ լինեին», «Մենակ ո՞նց ապրեմ, եթե կին չունես, ընկերդ կգա քեզ մոտ»: Միայն մի հարցվող էր անհնար համարում մենակ ապրելը. «Մենակ ոչ ոք չի կարող ապրել կյանքում. կա՛մ ընկեր, կա՛մ բարեկամ, կա՛մ խնամակալ պիտի լինի»:

**«Ըստ Ձեզ՝ այս տան բնակիչները կարո՞ղ են մենակ/ինքնուրույն ապրել»** հարցին դրական են պատասխանել հարցման մասնակիցներից գրեթե բոլորը: Հետաքրքիր է այն, որ կանանցից միայն

մեկն իր մասին պատասխան տվեց՝ զգուշանալով մյուսների մասին պնդումներ անել. «Գտնում են, որ ես կարող եմ, մյուսների մասին չեմ կարող ասել», հիմնականում տղամարդիկ էին իրենք իրենց մասին խոսում. «Ես կարող եմ, մյուսների մասին չեմ կարող ասել, չգիտեմ», «Ես իմ մասին կարող եմ ասել՝ այո»: Տղամարդկանցից միայն մի հոգի մյուսների մասին էլ կարծիք հայտնեց. «Ոչ բոլորը, բայց մեծամասնությունը՝ այո: Չնայած ասում են՝ ես չեմ կարող, բայց ես գիտեմ, որ կարող եմ», մինչդեռ կանայք բոլորի մասին էին կարծիք հայտնում տվյալ հարցին պատասխանելիս. «Ոմանք՝ այո, ոմանք ունեն խնամքի կարիք, շուտ են հոգնում», «Բոլորն էլ կարող են»:

Հարցվող բնակիչների կեսից ավելին նշել է, որ վախեր չունի, իսկ մյուսների վախերը հետևյալն են՝ վախ բնակարանը կորցնելու համար, վախ, որ չի բուժվի, ապագայի հանդեպ վախ, մենակությունից, վախ՝ ամբողջ կյանքում խնամքի տանը մնալուց:

Բոլորը՝ բացի մեկից, հեռուստացույց են նայում. այդ մեկը համակարգչով է բավարարում նույն պահանջմունքը:

Բոլոր հարցվող կանայք նշել են, որ սիրում են կարդալ ու անվանել են վերջին կարդացած կամ դեռ ընթացքում կարդացվող գիրքը: Հարցվող տղամարդկանց կեսն է նշել գիրք կարդալու մասին, մյուս կեսը չկարդալը պատճառաբանել է տեսողության խնդիրներով կամ մոտիվացիայի բացակայությամբ:

Որոշ բնակիչներ ցանկացել են ճշտել՝ արդյոք լիարժեք պատասխաններ են տվել, որը կրկին ցույց է տալիս նրանց սիրված ու գնահատված լինելու պահանջմունքը:

## Սոցիալական կարիքներ

Բոլոր հարցվողները՝ բացի մեկից, ցանկանում են տանը նոր բնակիչների տեսնել, եթե տարածքը ընդլայնվի և տարածական առումով հնարավոր լինի ընդունել նոր մարդկանց. ընդ որում, նրանց համար նոր բնակիչների սեռն այդքան էական չէ՝ բացառությամբ մեկի. վերջինս ցանկանում է՝ արական սեռի նոր բնակիչներ միանան իրենց, քանի որ իգական սեռի բնակիչներն ավելի շատ են. «Դե աղջիկներն ավելի շատ են, լավ կլինեն, որ հավասար լինեին»:

Բոլոր հարցվողներից միայն մեկը մտավախություն հայտնեց նոր բնակիչներ գալու առումով. «Ո՛չ, խումբը կխառնվի իրար»:

Տնից դուրս շփումներն ընդգրկում են հարազատներին, ընկերներին, որոշ բնակիչներ նաև նշել են Հելսինկյան հիմնադրամի անձնակազմին: Հարցազրույցներից սակայն նաև ակնհայտ է դառնում, որ բնակիչներն այդքան էլ ազատ չեն տնից դուրս գալու առումով. «Տանից չեն թողնում դուրս գալ», «Չեն թույլատրում», իսկ հարազատներն այդքան էլ հաճախ չեն հաղորդակցվում բնակիչների հետ, ավելի շուտ նրանց կողմից խուսափողական վարք է նկատվում, որի մասին որոշ բնակիչներ մեծ տխրությամբ են նշում: Այստեղ ևս համապատասխան աշխատանքի կարիք կա՝ հարազատների ներգրավվածությունն ապահովելու առումով:

Բոլորը՝ բացի երկուսից, ունեն անձնական հեռախոս, որով կարողանում են կապ հաստատել բարեկամների և ընկերների հետ: Տան ինտերնետից օգտվում են բոլոր հարցվողները՝ կիրառելով այն տարբեր իմացական կամ հուզական պահանջմունքներ բավարարելու համար. «Կամայուտերով երգեր եմ լսում», «Գրքի համար», «Հիսուսին ենք լսում»:

Հարցվող բնակիչները հանրային տրանսպորտից օգտվում են եկեղեցի կամ ժամանցի վայր գնալու համար, քանի որ ֆորմալ զբաղվածություն չունեն: Բոլոր հարցվող տղամարդիկ մոտ անցյալում ինչ-որ ժամանակ աշխատել են, կանանցից միայն մեկն է աշխատել: Այժմ ոչ մի հարցվող չի աշխատում, նրանցից միայն երեք իգական սեռի բնակիչներն են նշել աշխատելու

պատրաստակամության մասին, մյուսներն աշխատելու մոտիվացիայի բացակայությունը բացատրել են առողջական վիճակով. «Առողջականս չի ներում, կես դրույքով կուզեի», «Կարող ա լինի, բայց ես չեմ գնում, ֆիզիկապես չեմ կարող»: Գումար ստանում են թոշակից: Երբեմն նաև ֆինանսական աջակցություն ստանում են բարեկամներից, որի մասին նշել են հարցվողներից երկուսը:

### **Բնակիչների նկատմամբ վերաբերմունք**

Տղամարդիկ մտերիմ են տղամարդկանց հետ, իսկ կանայք՝ կանանց:

Բնակիչները, ընդհանուր առմամբ, ունեն առնվազն հանդուրժողականություն միմյանց հանդեպ. «Թող մնան, տարբեր բնավորությամբ մարդիկ են», «Բոլորս սիրում ենք իրար»:

Ըստ հարցվողների՝ իրենք խրախուսանքի արժանանում են և՛ պարտականությունները լավ կատարելու համար, և՛ յուրաքանչյուր նոր սովորած հմտության համար, և՛ ամեն լավ վարք դրսևորելիս (ընկերոջն օգնելու, զիջելու, կանոններին հետևելու կամ նմանատիպ այլ վարքի համար): Հաճախականությունը նշել են **«Երբեմն/հազվադեպ»**: Նրանցից միայն մեկն է նշել **«Գրեթե ամեն օր»**՝ լավ գիտակցելով, որ դա իր վարքից է կախված:

**«Այս տանը տղա՞ներն են ավելի շատ խրախուսանքի արժանանում, թե՞ աղջիկները»** հարցին մոտ կեսը պատասխանել է՝ հավասարապես ստանում են: Որոշները գտնում են, որ կանայք են ավելի շատ խրախուսանքի արժանանում, քանի որ իրենք ավելի շատ են գործ անում, հետևաբար հավանականությունը մեծ է. «Աղջիկները հիմա հերթապահում են, մենք ընդհանրապես չենք աշխատում մի երեք ամիս»: Բացի այդ, աշխատողների կողմից կա դրական վերաբերմունք կանանց նկատմամբ. «Մեզ առավելություն են տալիս, դեղերը աղջիկներն առաջինը խմեն...»:

Հարցվող կանանցից ոչ մեկի հանդեպ որևէ պատիժ չի կիրառվել, իսկ հարցվող տղամարդկանց գրեթե բոլորի հանդեպ կիրառվել է: Պատիժները սովորաբար ծխախոտի քանակի պակասեցման կամ զրկելու ձևով է դրսևորվում. «Պատժում են՝ ավելի քիչ ծխախոտ են տալիս», «Զրկում են ծխախոտից»: «Լինում է, որ տղաները թաքուն ծխում են, իրենց դիտողություն են անում», «Բարկանում են, ծեծ կամ այլ պատիժ չկա»:

Հարցվողների մեծ մասը գոհ է աշխատակազմի աշխատանքից. «Շատ լավ են վերաբերվում, վեց խնամակալ, բայց բնակիչներ կան, որ միշտ դժգոհ են»:

Հարցվող կանանցից մեկը նշել է, թե որքան երախտապարտ է աշխատող անձնակազմից, քանի որ իր կյանքը շատ են փոխել. «Բհարկե, ասեղ բռնել չեմ կարողացել, ինքնամփոփ էի, իսկ հիմա շատ հարցերում փոխվել եմ, ինձ լավ եմ զգում»:

### **Բնակիչների որոշումների կայացում**

Հարցվող տղամարդկանց մեծամասնությունը կարծում է, որ չի մասնակցում որոշումների կայացմանը, ամեն ինչ աշխատողներն են որոշում ու ասում, մինչդեռ կանանց մեծամասնությունը հակառակ կարծիքին է և նշել է, որ մասնակցում է: Հարցվողների գրեթե կեսը նախընտրում է ինքնուրույն որոշում կայացնելը:

**«Կա՞ ինչ-որ բան, որ կուզեիք անել, բայց չեք անում: Ինչու»** հարցի պատասխանները բազմազան են. «Ճաշ պատրաստել, խմոր հունցել», «Ծխելն ա», «Շատ բան կա անելու, բայց հնարավորություն չկա. ատամներս սարքելի, որ կարողանայի խոսալ», «Ես բնակարան չունեմ ու մտածում եմ հետագայում ոնց կլինի այդ հարցը. բարեկամներս կօգնեն-կլուծեն՝ ն, թե՞ ոչ»:


Այն հարցին, եթե հնարավորություն ունենային զբաղվելու միայն նրանով, ինչով որ սիրում են, բնակիչները տվել են հետևյալ պատասխանները՝ գիրք կարդալ, ծաղիկներ աճեցնել, երաժշտություն լսել, գիրք ստեղծել, շատ ծխել, իսկ կանանցից երկուսը նշել են՝ մաքրությունը: Ըստ էության՝ շատ չեն հեռացել իրենց ամենօրյա անելիքների ցանկից:

### Գենդերային կարծրատիպեր (գենդերային զգայունություն և կարծրատիպերի նկատմամբ վերաբերմունք)

Բոլոր հարցվող բնակիչները գոհ են իրենց սեռից/գենդերից: Որոշները գտնում են, որ հակառակ սեռի համար ավելի բարդ է կյանքը. «Տղաների համար նենց ցավալի վիճակ ա մեր երկրում. պատերազմ են գնում, վիրավորվում, զոհվում...», «Աղջիկների կյանքը դժվար է, սա տղամարդկանց աշխարհ է»:

«Ըստ Ձեզ՝ գոյություն ունի՞ տղայի գործ, աղջկա գործ» հարցին դրական է պատասխանել հարցվողների բացարձակ մեծամասնությունը, միայն մեկն է բացասական պատասխան տվել նույն հարցին: Վերջինս առանձնանում է իր էզալիտար դիրքորոշմամբ:

Աղյուսակ 3.



Վերոնշյալ աղյուսակում (Աղյուսակ 3) ներկայացված են հարցվողների պատկերացումները պարտականությունների սեռային բաշխման վերաբերյալ. ընդ որում, առաջին սյունակը կանանց պատասխաններն է ներկայացնում, իսկ երկրորդը՝ տղամարդկանց, քանի որ հարցվող կանայք 5, իսկ տղամարդիկ՝ 4-ն են: Թե «**ուլքե՞ր կարող են անել աղյուսակում նշված գործողությունները**», պատասխաններում ակնառու կերպով արտացոլում են հարցման մասնակից բնակիչների գենդերային դիրքորոշումները:

«Այս տանը կա՞ դերերի բաշխում, թե աղջիկներն ինչ պիտի անեն, իսկ տղաները՝ ինչ» հարցին նույնպես դրական է պատասխանել հարցման մասնակից բնակիչների մեծամասնությունը, միայն մեկն է գտել, որ ամեն ինչ հավասար են անում: Պարտականությունների բաշխումը՝ ըստ սեռերի, դրսևորվում է հետևյալ կերպ. «մաքրությունը, խոհանոցում հերթապահությունը՝ աղջիկները,



տղաներն էլ այգու գործերը, ծանր աշխատանքը», «Աղջիկները խոհանոցում են հերթապահում... դրսի գետինը տղաներն են մաքրում», «Լվացք փռելը տղաները կարող են, բայց կանացի գործ ա...»:

**«Այս տանն իզակյան սեռի բնակիչներն են շատ տան գործ անում, թե՛ արական»** հարցին ևս հարցվողներից գրեթե բոլորը դրական են պատասխանել՝ բացատրելով. «Աղջիկներն են տան գործ շատ անում. իրենց բնույթն ա տուն մաքրել, աղջիկների գործ ա»: Միայն մեկ իզակյան սեռի բնակիչ է գտնում, որ պարտականությունները բոլորն են անում:

Հատկապես հետաքրքիր են բնակիչների պատասխաններն աշխատակազմի սեռային բաշխվածության վերաբերյալ: Հարցին՝ **«կուզե՞ք հակառակ սեռի աշխատողներն ավելի շատ լինե՞ին»**, պատասխանները հիմնականում բացասական են, բայց նրանցում առանձնացել են հետևյալները. «Տարբերություն չկա, կարևորը լավ վերաբերվեն ու օգնեն մեզ», «Մի կողմից լավ է, որ կանայք աշխատակազմում շատ են, մյուսից՝ վատ. կնոջ հետ չես կարող հակաճառել, համոզել, որ ծխախոտ տա», «Ես ենթակա մարդ եմ, եթե դեկավարությունն ուզի տղամարդկանց ընդունել, ինձ չի հարցնի»:

**«Արդյո՞ք տարբերվում են իզակյան ու արական սեռի բնակիչների կարիքները»** հարցի պատասխանների կեսից ավելին եղել է դրական. «Աղջիկները սիրում են կարդալ, տղաները զբաղված են երաժշտությամբ, կանայք գրել են են անում, տղամարդիկ ուզում են պրոֆեսիոնալ մասաժով զբաղվեն», «Կանայք հիմնականում չեն ծխում, տղաները բոլորը ծխում են», «Աղջիկների ու տղաների մեջ հոգեբանորեն տարբերություն կա»:

## **Բռնության նկատմամբ վերաբերմունք**

Հարցման մասնակիցներից երեքը նշել են, որ ինչ-որ ժամանակ իրենց հանդեպ բռնություն կիրառվել է, մեկը հրաժարվել է պատասխանել, իսկ մյուսները՝ տվել են բացասական պատասխան:


**«Արդյո՞ք մարդկանց առանց ֆիզիկական ուժի անհնար է սաստելը/կարգուկանոն սովորեցնելը»** հարցին բնակիչների պատասխանները ոչ միայն ժխտական են, այլև բոլորն էլ ինչ-որ մեկնաբանություն տվել են. «Խոսքով ավելի հեշտ է», «Նման մարդիկ կային, որ միայն այդ լեզուն էին հասկանում», «Կան մարդիկ, որոնց չի օգնում մարդկային վերաբերմունքը, դեմ եմ ֆիզիկական ուժի կիրառմանը, բայց կան մարդիկ ում հանդեպ... արդարացվում է», «Բարձր ձայնով սաստելը սխալ չի», «Չեն խփում, մեզ սիրում են», «Դա վերջին տարբերակն է, լավ է բանականությունը գործի դնել», «Կա տղամարդ, ուզում էս ուժով, ուզում էս լեզվով, չի կարողանում», «... որ իրա տրամաբանությունը ների, առանց բռնության կլինի», «Ուղղակի որոշ մարդիկ հասկանալով կամ չհասկանալով ջղայնացնում են աշխատողներին»: Պատասխաններից կարելի է եզրակացնել, որ որոշ բնակիչներ չեն ենթարկվում ընդունված կարգուկանոնին (գոնե հարցվողների կողմից ընդունված կանոններին), ում հանդեպ կիրառվում են ծայրահեղ սաստման միջոցներ:

Հարցվող բնակիչները նաև նշել են, որ երբ **բնակիչներից որոշները վիճում են, կովում կամ հարձակվում են միմյանց վրա**, իրենք փորձում են բաժանել, հանդարտեցնել և հաշտեցնել կամ դիմում են աշխատողներին:

**«Այս կառույցում կանանց կամ տղամարդկանց նկատմամբ բռնության դեպքեր եղե՞լ են»** հարցին որոշները պատասխանել են դրական, որոշները՝ բացասական, իսկ ոմանք էլ հրաժարվել են պատասխան տալուց: Իսկ **«ի՞նչ է արվել բռնության դեպքում»** հարցին պատասխանել են. «Պատժում են՝ ուղարկում են հիվանդանոց», «Բարձր տոնով խոսել են, պարտավորեցրել են անել, եթե հրաժարվել է», «Ուղարկում են Վանաձոր՝ հոգեբուժարան, եթե չի հանգստանում, 24 օր մնում է»: Այս վերջինը հիմք է տալիս մտածելու, որ բժշկական/հոգեբուժական միջամտությունը

ներկայացվում է որպես պատիժ, ինչը կարող է սաստկացնել հոգեբուժական գործունեության նկատմամբ բացասական վերաբերմունքն այս տան բնակիչների մոտ:

Աղյուսակ 4.



«Աղյուսակ 4»-ում ուղղահայաց առանցքը մասնակիցների թվի արտացոլումն է, իսկ հորիզոնականում ներկայացված տվյալները ցույց են տալիս հարցվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընկալումները բռնության տարբեր տեսակների նկատմամբ: Ինչպես և ակնկալվում էր, հոգեբանական բռնության տեսակներն ավելի քիչ են ընկալվում իբրև բռնության դրսևորում, քան ֆիզիկականը:

«Այս կառույցում բռնությանը արձագանքելու կանոն կա՞» հարցին պատասխանների մեծամասնությունը բացասական է եղել, իսկ մեկնաբանությունները շատ բազմազան. «Իրավաբաններ կան, տնօրեն կա, որ թույլ չեն տա», «Ես չեմ թույլատրում, որ տենց բան լինի»:

## Ամփոփում և եզրակացություն

- 1) Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչների ֆիզիոլոգիական տարիքային շեմերն ավելի բարձր են (32-59), քան «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի տների բնակիչներինը (26-45): Դա նաև դրսևորվում է կուտակած կենսափորձի արտահայտումով և դրանով պայմանավորված՝ հարցազրույցի ընթացքով ու տրվող հարցերի ըմբռնման առանձնահատկություններով:
- 2) Հարցվող բնակիչների ներկայացմամբ՝ իրենց ֆիզիոլոգիական պահանջումները հիմնականում բավարարվում են: Սննդին առնչվող հավակնությունները կանանց մոտ ավելի քիչ են, քան տղամարդկանց մոտ: Քնին առնչվող պահանջումների բավարարման խնդիրներ հիմնականում չկան: Իսկ ֆիզիկական գանգատների դեպքում դիմում են աշխատակիցներին և ըստ անհրաժեշտության համապատասխան բժշկական աջակցություն են ստանում:
- 3) Անձնական տարածքի ընկալումները տարբեր խմբային տներում տարբեր են. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամում կանանց մեծ մասը գտնում է, որ չունի անձնական տարածք և կցանկանար ունենալ, մինչդեռ Սպիտակի խնամքի տան կանայք բավարարվում են իրենց անձնական սենյակներով: Հարկ է ընդգծել, որ անկախ խմբային տան առանձնահատկությունից՝ տղամարդկանց անձնական տարածք ունենալու հարցը շատ չի հուզում. նրանց մի մասը գտնում է, որ ունի անձնական տարածք, մյուս մասն էլ կարծում է, որ անձնական տարածքի կարիք չունի:
- 4) Հարցվողների բացարձակ մեծամասնությունը գտնում է, որ բոլոր տներում իգական սեռի բնակիչներն են ունակ ինքնուրույն ապրելու, մինչդեռ նույն այդ կանայք համոզված չեն, որ կարող են ինքնուրույն ապրել: Նրանք հիմնականում հենց այն բնակիչներն են, որոնք սոցիալապես ամենաընդունվածն են խմբերում, հարցվողների մեծ մասը նրանց է նշել ի պատասխան հետևյալ հարցին՝ «Այս տանը կա՞ն մարդիկ, ում ներկայությունը Ձեզ համար կարևոր է և կուզեք, որ միշտ Ձեր կողքին լինեն»: Հավանաբար նրանց ինքնուրույնությունը վստահության զգացում է տալիս մյուս բնակիչներին, ինչպես նաև փոխհաստուցում է խնամողի բացակայությունը: «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի արական սեռի բնակիչների ընկալմամբ, իրենց ինքնուրույնությունը բավարար չէ մենակ ապրելու համար, կենցաղավարմանն առնչվող և այլ խնդիրների լուծման համար հարկավոր է կա՛մ աշխատողների, կա՛մ իրենց տանը բնակվող ինքնուրույնության բարձր աստիճան ունեցող իգական սեռի բնակիչների ներկայությունը:
- 5) Որոշ բնակիչներ վերոնշյալ հարցին («Այս տանը կա՞ն մարդիկ, ում ներկայությունը Ձեզ համար կարևոր է և կուզեք, որ միշտ Ձեր կողքին լինեն») պատասխանելիս նաև իգական սեռի աշխատողների անուններն են տվել. աշխատողների ներկայությամբ իրենք իրենց հանգիստ ու ապահով են զգում: Դրանով է պատճառաբանվում նաև կին աշխատողների նախապատվությունը՝ որպես խնամողի պակասի/բացակայության կոմպենսացիա: «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի բնակիչների պարագայում դա հիմնականում մոր կերպարի հետ է կապվում:
- 6) Հարցվողների մոտ նոր բնակիչներ ընդունելու վերաբերյալ կարծիքները նույնպես տարբերվում են. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի բնակիչների մեծամասնությունը համաձայն է, որ խմբային տներում նոր բնակիչներ ընդունելու դեպքում նախապատվություն տրվի իգական սեռի ներկայացուցիչներին: Որոշներն այս ընտրությունը հիմնավորել են կանանց հետ շփման հեշտությամբ, որոշները՝ նրանց մաքրության չափանիշների համընկնումով, որոշները՝ օգնելու պատրաստակամությամբ: Իսկ Սպիտակի խնամքի տան

բնակիչների համար կարևոր է տարածքի հնարավորությունը. եթե տարածքը ընդլայնվի և տարածական առումով հնարավոր լինի ընդունել նոր մարդկանց, նրանց համար նոր բնակիչների սեռն այդքան էական չէ՝ բացառությամբ մեկի. վերջինս ցանկանում է՝ արական սեռի նոր բնակիչներ միանան իրենց, քանի որ իգական սեռի բնակիչներն ավելի շատ են:

- 7) Ֆորմալ աշխատանք ունենալու նկատմամբ մոտիվացիայի առկայության վերաբերյալ բնակիչների մոտեցումները ևս տարբերվում են. Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչների մեծամասնությունը մոտիվացված չէ աշխատանք ունենալու առումով, ինչը նրանք կապում են առողջական վիճակի հետ: Թեև «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի բնակիչները շատ աշխատանքային փորձ չունեն, բայց նրանցից որոշները ոգեշնչվում են իրենց երբևէ աշխատող բնակիչներից և տնից դուրս աշխատելու պատրաստակամություն են հայտնում: Ընդհանուր առմամբ, խմբային տների իգական սեռի աշխատելու ցանկացող բնակիչների թիվը կրկնակի անգամ մեծ է արականից: Աշխատող բնակիչների մոտ ինքնավստահությունը, պատասխանատվության ու օգտակար լինելու զգացումներն ավելի արտահայտված են:
- 8) Բոլոր տներում էլ կան բնակիչներ, որոնց մոտ՝ անկախ սեռից, սիրված ու գնահատված լինելու պահանջմունքը ակտիվացած է: Դա հատկապես նկատվում է ն՝ տակտիլային շփման պահանջմունքով (ցանկանում են գրկել, փաթաթվել), և՛ հարցազրույցի ընթացքում խրախուսանքի արժանանալու ցանկությամբ. «Լավ եմ պատասխանում, չէ՞»:
- 9) Աշխատակազմերի ներկայացուցիչները, որպես իրենց պարտականության մաս, բնակիչներին են տրամադրում գենդերային դերերի մասին իրենց ունեցած մոդելները: Քանի որ բնակիչների մեծամասնության համար իրենք հանդիսանում են ռեֆերենտային անձինք, բնակիչներն այդ գենդերային մոդելների մասին պատկերացումներն անվերապահ ընդունում են: Դրանով է բացատրվում գենդերային կարծրատիպերի շրջանառությունը բնակիչների շրջանում. «Տղեն պետք է աղջկան պաշտպանի», «Տղան գնում է գործի, չի կարա էրեխուն խնամի, եթե երկուսն էլ գնան, էրեխու մոտ մարդ չի մնա», «Աղջիկները կարան ճաշի մասնակցեն, մաքրությանը մասնակցեն, ձեռքի աշխատանք, տղաներն էլ կարան գնան հողամասը մշակեն»:
- 10) Խմբային տների բնակիչների գենդերային դերերի վերաբերյալ մոտեցումները տարբերվում են միմյանցից. Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչների մեծ մասի սոցիալականացման առանձնահատկությունները բնորոշում են գենդերային դերերի կայուն ընկալումը: Վերջիններիս մոտ գենդերային կարծրատիպերն ավելի ակտիվ են. «Արվեստի մեջ միշտ տղերքն են առաջ եղել, միայն Ս. Կապուտիկյանն է բանաստեղծուհի», «Լվացք փռելը տղաները կարող են, բայց կանացի գործ ա...»: Իսկ Ջերմիկի բնակիչների գենդերային դերերի վերաբերյալ պատկերացումներն ավելի ճկուն են: Բացի այդ, Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչներն ինքնուրույն են դատողություններ անում, իսկ Ջերմիկի բնակիչներին պատրաստի դատողություններ են տրամադրվում աշխատակիցների կողմից: Դա դիտարկվում է վերջիններիս աշխատանքի մաս. օրինակ՝ խոսում են կրոնից, հավատքից, բարոյական նորմերից, լավ ու վատ վարքից, գենդերային դերերից և այլն:
- 11) Վերոնշյալ գենդերային կարծրատիպերը դրսևորվում են խմբային տներում բնակվող կանանց և տղամարդկանց առօրյա կենսակերպում: Տղամարդիկ ավելի քիչ կենցաղային գործ են անում, քան կանայք. նրանցից ավելի քիչ են սպասելիքները, հետևաբար նրանց արած աշխատանքն էլ բավարար որակյալ չի, քանի որ ի սկզբանե կա գաղափար, որ կենցաղը տղամարդկանց գործառնական տիրույթը չի: Դրանով է պայմանավորված նաև այն,

որ օրվա նկարագրության մեջ կանանց մեծ մասն անպայման նշել է նաև կենցաղավարման պարտականությունների կատարման մասին, մինչդեռ տղամարդկանցից շատ քչերն են նշել դա: Կենցաղավարման առումով տղամարդկանցից ունեցած ցածր ակնկալիքներն էլ մասամբ կարող են պայանավորել նրանց մոտ ինքնուրույնության ցածր մակարդակը. նրանք մենակ ապրելու համար ավելի քիչ են ադապտացված: Չնայած սրան՝ որոշ արական սեռի ներկայացուցիչների կարծիքով իրենք գործ են անում կանանց հավասար, մյուսների կարծիքով՝ իրենք միայն օգնում են: Կանայք գտնում են, որ տան գործ հիմնականում իրենք են անում, տղամարդիկ ընդամենն օգնողի դերում են: Սա հիմնավորվում է նաև տարբեր հարցվողների կարծիքներով, որ առնվազն ընդհանուր սենյակները հիմնականում իգական սեռի բնակիչներն են մաքրում:

- 12) Սպիտակի շուրջօրյա խնամքի տան և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի իգական ու արական սեռերի բնակիչների փոխհարաբերություններում ակնհայտ տարբերություն կա, քանի որ առաջինում տղամարդիկ զարնանից աշուն ժամանակահատվածում ակտիվ աշխատում են գյուղատնտեսության ոլորտում, ստեղծում են գյուղատնտեսական բարիք և դա դրական է գնահատվում կանանց կողմից. վերջիններս հանդուրժողաբար են վերաբերվում կենցաղային գործերում տղամարդկանց սակավ ներգրավվածությանը: Իսկ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի տղամարդիկ հողագործությամբ որքան էլ զբաղվեն, դա միայն կարող է ժամանցի բնույթ կրել, կոնկրետ սննդի ապահովման խնդիր չեն լուծում: Եթե սովորական պայմաններում տղամարդը գնում է աշխատանքի, իսկ կինը տան կենցաղն է վարում, և նրանց երկուսի աշխատանքն էլ համապատասխան արդյունք է ստեղծում, ապա «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի տների պարագայում տղամարդկանց կողմից գրեթե արդյունք չի ստեղծվում, այդ պատճառով իգական սեռի բնակիչները չեն ցանկանում արական սեռի բնակիչների հետ ապրել, քանի որ ի լրումն արդյունքի պակասի/բացակայության՝ նրանք նաև «փնթի են ու տան գործ չեն անում». «Տղաները ցանկություն չեն ունենում, իրանք չեն ասում. ի՞նչ օգնելու բան կա, իսկ մենք ասում ենք»: Կանանց կողմից բացասական վերաբերմունք կա տղամարդկանց հետ համատեղ ապրելու գաղափարի նկատմամբ. «Տղաները ծույլ են ու փնթի»:
- 13) Հարկ է նաև հաշվի առնել, որ իմացական գործընթացների ակտիվության աստիճանով հասկապես «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի արական սեռի բնակիչները շատ առումներով զիջում են իգական սեռին, ինչն անմիջականորեն ազդում է նրանց առօրյա կողմնորոշման, կենցաղավարման, ինքնախնամքի, հմտությունների մշակման և այլ ոլորտների վրա: Տղամարդկանց և կանանց մտավոր զարգացման այսպիսի դիստանսը հետևանք է նաև այն հանգամանքի, որ արական սեռի երեխաներից մեր իրականությունում շատ ավելի հազվադեպ (ավելի ծանր մտավոր հաշմանդամության դեպքերում) են հրաժարվում, քան իգական սեռից<sup>5</sup>:
- 14) Կանայք իրենց իմացական պահանջումները բավարարմամբ ավելի շատ են զբաղվում. ըստ հարցվողների՝ բոլոր խմբային տներում կանայք ավելի շատ են գիրք կարդում, քան

---

<sup>5</sup> Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020 թվականին գրանցված է եղել 8771 հաշմանդամություն ունեցող երեխա, որոնցից 2757-ը (31%) աղջիկ. ընդ որում՝ հոգեկան և վարքի խանգարումներ ունեցողների ընդհանուր թիվը կազմել է 2491, որոնցից 602-ն է աղջիկ (24%): Մինչդեռ խնամքի հաստատություններում գրանցված հաշմանդամություն ունեցող երեխաների մոտ կեսն աղջիկներ են: Աղբյուրը՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային տեղեկատվական բազայի տվյալներ (հաշմանդամության վարչական ռեգիստր) [https://armstat.am/file/article/sv\\_01\\_21a\\_530.pdf](https://armstat.am/file/article/sv_01_21a_530.pdf)

տղամարդիկ. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի հարցազրույցին մասնակցած արական սեռի բնակիչները կարդալ չգիտեն, Սպիտակի շուրջօրյա խնամքի տան տղամարդկանց կեսը մոտիվացիա չունի, մյուս կեսը՝ տեսողության հետ կապված խնդիրներ ունի և հարմար չի գտնում կարդալիս: Մա անխուսափելիորեն անդրադառնում է նրանց կյանքի տարբեր ասպեկտների վրա, քանի որ տարբեր հետազոտություններ փաստում են կարդալու և մյուս իմացական գործընթացների կապի մասին:

- 15) Որոշումների կայացման գործընթացներում բոլոր տներում իգական սեռի բնակիչներն են գլխավորապես ներգրավված, ինչը չի նկատվում արական սեռի մոտ. ընդ որում, դրանից դժգոհության զգացում ունեն Սպիտակի շուրջօրյա խնամքի տան արական սեռի բնակիչները, մինչդեռ Ջերմիկի տղամարդիկ գոհ են, որ «իրենց օգնում են, իրենց փոխարեն որոշում են»: Ըստ հարցման արդյունքների՝ առաջիններին չեն ներգրավում որոշումների կայացման գործընթացում, իսկ երկրորդների մոտ հմտության պակաս/բացակայություն է նկատվում:
- 16) Բոլոր հարցվողների մեծամասնությունը համաձայնել է, որ իրենց տներում իգական ու արական սեռի բնակիչների կարիքները տարբերվում են, ընդ որում՝ Ջերմիկի բնակիչներն ավելի կենտրոնացել են ցանկությունների տարբերությունների ընդգծման վրա. «Աղջիկները քսվելիք են ուզել/ստացել, տղաները՝ ակնոց, գրիչ, ալբոմ», իսկ Սպիտակի բնակիչները անձնային տարբերությունների. «Աղջիկների ու տղաների մեջ հոգեբանորեն տարբերություն կա»:
- 17) Խմբային տներում առանձին բռնության կանխարգելման կանոններ չկան, ուղղակի բացատրվում է, որ չի կարելի անել: Նկատելի է, որ բնակիչների մոտ բռնության մասին պատկերացում կա. «Եթե ստիպում են բռնություն է»: Մասնավորապես, սեռական բռնության մասով իրազեկված են, պատասխանների ժամանակ այդ հարցերին ավելի սուր են արձագանքել:
- 18) Որոշ դեպքերում աշխատողների կողմից բղավելն արդարացվում է բնակիչների տեսանկյունից, «քանի որ որոշ բնակիչներ ամեն օր կարող են նույն սխալն անել և չենթարկվել կանոններին»: Երբեմն անելանելիության զգացումն ուղղորդում ու պատճառաբանում է բռնության գործածումը. «Կան մարդիկ, որոնց չի օգնում մարդկային վերաբերմունքը, դեմ եմ ֆիզիկական ուժի կիրառմանը, բայց կան մարդիկ, ում հանդեպ այլ վերաբերմունք չի ազդում»: Մինևույն ժամանակ հարցվողների մեծ մասի կողմից հերքվում է իրենց տանը բռնության առկայությունը. «ամեն ինչ լավ է»: Այստեղ հարկ է նշել, որ աշխատակիցները ոչ միայն ստանձնում են բնակիչների կենցաղավարման գործառնությունի աջակցողների դերը, այլև զսպում են՝ միմյանց վնասելուց:
- 19) Խմբային տունը, ընդհանրապես, տան պես է ընկալվում, «բոլորի հանդեպ շատ հոգատար են»: Դա արտահայտվում է նաև տնային պարտականություններն անելու պատրաստակամության մեջ. «Մեր տունն է, պետք է մաքրենք»:
- 20) Աշխատողների խորհուրդների նկատմամբ դրական վերաբերմունք է առկա. «Մեր համար են ասում, որ ասում են՝ տաք հագեք, սիրուն հագեք...», «Գոհ ենք ու շնորհակալ, որ մեզ ուղղություն են ցույց տալիս, եթե իրենք չլինեին, մենք չէինք կարող առաջ գնալ»: Աշխատողին հարազատորեն են վերաբերվում, նրա կողմից գոլշացումները շատ նորմալ են ընդունվում «որովհետև իր պատասխանատվության տակ են բոլորը»:
- 21) Հարցազրույցի մասնակիցների մեծամասնությունը գտնում է, որ աշխատողների դրական

վերաբերմունքն արտայատվում է հատկապես կանանց նկատմամբ, կանայք ավելի շատ են խրախուսական խոսքերի արժանանում, քանի որ կենցաղավարման մեջ իրենք ավելի շատ են ներգրավված:

- 22) Թեև բոլոր բնակիչներն օրակարգով են առաջնորդվում, բայց իրենց ազատ են զգում: Նախկինում Սպիտակի շուրջօրյա խնամքի տան բնակիչներն առանց աշխատողի ուղեկցության կարող էին դուրս գալ, վերջին երկու տարում՝ միայն աշխատողի ուղեկցությամբ: Իսկ Ջերմիկի բնակիչները գերազանցապես աշխատակցի ուղեկցությամբ են տնից դուրս գալիս, եթե դա աղբը թափելուն կամ բակում հարևանների հետ շփվելուն չի վերաբերում: Կարևոր է նաև ընդգծել, որ բոլոր տների կանայք իրենց ազատ են զգում, իսկ Սպիտակի շուրջօրյա խնամքի տան տղամարդիկ իրենց ազատությունը՝ ի համեմատություն նախորդ տարիների որոշ առումով սահմանափակ են համարում:
- 23) Հոգեբուժարան ուղարկելու սպառնալիքը՝ որպես պատիժ, կարող է բացասաբար անդրադարձնալ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց բժշկական միջամտության գործընթացի վրա: Հակասական վերաբերմունք առաջացնելով հոգեբույժի և նրա մասնագիտական հեղինակության նկատմամբ՝ դա կարող է տարածվել նաև նրա առաջարկած բուժման վրա՝ մեծացնելով բուժման և դեղեր խմելու հանդեպ դիմադրությունը:
- 24) Ընդհանուր առմամբ բնակիչները շատ գոհ են խմբային տներում գտնվելու համար և կարծում են, որ իրենց կարիքներն այնտեղ բավարարվում են: Համեմատելով նախկին բնակության վայրերի հետ, որտեղ զգալի մասն առնվազն բռնության ակնատես է եղել՝ այս խմբային տներում իրենք շատ հարմարված են, իրենց համար բավականին միջոցներ են ձեռնարկվել՝ հնարավորինս արձագանքելու նրանց կարիքներին: Որոշ բնակիչներ ընդգծել են. «Նման խնամքի տներ շատ լինեն ու մարդկային մոտեցման արժանանան ու ոչ մեկ բռնության գոհ չլինի, որովհետև ամեն ինչ ժամանակավոր է», «Իհարկե, ասեղ բռնել չեմ կարողացել, ինքնամփոփ էի, իսկ հիմա շատ հարցերում փոխվել եմ, ինձ լավ եմ զգում, կուզեմ այլ մարդիկ էլ այս ջերմ ու լավ վերաբերմունքը ստանան»:
- 25) Թեև բնակիչներն ընդհանուր առմամբ գոհ են խմբային տներում իրենց կեցությունից, սակայն կանանցից մի քանիսը նշել են, որ իրենց տան արական սեռի որոշ բնակիչներ անհանգստացնում են իրենց, մինչդեռ տղամարդիկ հիմնականում իրենց հարմարավետ են զգում խմբային տներում:



## Առաջարկություններ

- 1) Մեծացնել անձնակազմի գենդերային զգայունությունը, իգական ու արական սեռերի մասին ունեցած կարծրատիպային մոտեցումների նկատմամբ քննադատական վերաբերմունքը, ինչն անմիջականորեն կազդի կանանց և տղամարդկանց կենցաղավարման պրոցեսները կազմակերպելու վրա, կնպաստի կանանց և տղամարդկանց էգալիտար հարաբերությունների կառուցման հնարավորության ստեղծմանը՝ նվազագույնը կենցաղային մակարդակում:
- 2) Արական սեռի բնակիչներին ավելի շատ ներգրավել կենցաղային և որոշումների կայացման գործերում, որպեսզի իրենց ինքնուրույն կենցաղավարումը, որոշումների կայացման հմտությունը և դրանով նաև սոցիալ-հոգեբանական ադապտիվությունը մեծանան: Հարկ է, սակայն, հաշվի առնել խմբային տներում ապրող արական սեռի ներկայացուցիչների ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական համապատասխանությունը և հնարավորությունները:
- 3) Բնակիչներին խրախուսել՝ ավելի շատ կարդալ, իսկ հմտության բացակայության դեպքում՝ աջակցել, որպեսզի յուրացնեն այն:
- 4) Աջակցել բնակիչների ինքնուրույնության ավելացմանը կենցաղավարման, որոշումների կայացման ոլորտներում, նպաստել նրանց կարիքները ինքնուրույն հոգալու հնարավորությունների ավելացմանը:
- 5) Ներմուծել բռնության բոլոր ձևերի կանխարգելման վերաբերյալ կանոններ բոլոր խմբային տներում, ինչպես նաև ապահովել բռնության արձագանքման մեխանիզմներ և գործիքակազմ տրամադրող հանդիպումներ և՛ աշխատակազմի, և՛ բնակիչների համար:
- 6) Բնակիչներին ինքնարտահայտման ավելի մեծ հնարավորություններ տրամադրել տարբեր խմբակներ հաճախելու ընտրության հնարավորությամբ:
- 7) Բնակիչներին տրամադրել շփման ավելի մեծ լսարաններ/օղակներ՝ սոցիալիզացիայի ավելի նոր մակարդակներում ինքնադրսևորվելու հմտությունները յուրացնելու համար:
- 8) Սիրված ու գնահատված լինելու պահանջումնքի բավարարման համար համապատասխան միջոցներ ձեռնարկել. խմբային ու անհատական հանդիպումներին անդրադարձ կատարել նաև նրանց տվյալ պահանջումնքի բավարարմանը՝ իրենց իսկ նախընտրած ձևի բացահայտմամբ:
- 9) Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքի ձևավորման գործառույթի իրացման կոնտեքստում զարգացնել Սպիտակի բնակիչների հարազատների ներգրավվածության համար համապատասխան միջոցառումների իրականացման հնարավորությունները:
- 10) Քանի որ աշխատակազմերի պրոֆեսիոնալիզմն ու մասնագիտական աճն ուղիղ կերպով անդրադառնում են բնակիչների կենսական կարիքների բավարարման, ինքնուրույնության ձեռքբերման ու այլ հմտությունների մշակման վրա, ուստի և՛ Սպիտակի շուրջօրյա խնամքի տան, և՛ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի աշխատակազմերի համար ցանկալի է ապահովել սուպերվիզիաներ ու վերապատրաստումներ, փորձի փոխանակման հանդիպումներ, քննարկումներ և այլ հարթակներ այդ ամենը բնակիչների հետ աշխատանքի որակը բարձրացնելու համար, ինչպես նաև այրման համախտանիշից խուսափելու և մասնագիտական ինքնախնամք ապահովելու համար:



## Գրականություն

- Գևորգյան, Հ., 2014: *Գենդեր. խնդիրներ և լուծման ուղիներ: Գենդերային ուսուցման մեթոդաբանական մոտեցում*: Էդիթ Պրինտ, Երևան
- Թադևոսյան, Ա., 2016: *Կինը և տղամարդը առօրյա կյանքում. անհավասարության խնդիրը ավանդույթի և պրակտիկաների հատույթում. Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. հետազոտությունից դեպի քաղաքականություն (գիտաժողովի նյութեր)*, 153–174
- Թեմուրյան, Մ., 2017: *Սպիտակի խնամքի տուն. Ինստիտուցիոնալ համակարգից անցում համայնքահեն ծառայության: Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Վանաձոր*
- di Tore, P.A., Raiola, G., Altavilla, G., Gervilli, M.G., Pignato, S., Lipoma, M., 2016. *Visual motor skills and reading fluency: a correlational study*. Journal of Human Sport and Exercise 11. <https://doi.org/10.14198/jhse.2016.11.Proc1.14>
- Fletcher, J.M., Stuebing, K.K., Barth, A.E., Denton, C.A., Cirino, P.T., Francis, D.J., Vaughn, S., 2011. *Cognitive Correlates of Inadequate Response to Reading Intervention*. School Psychology Review 40, 3–22. <https://doi.org/10.1080/02796015.2011.12087725>
- McNamee, D., 2014. *Childhood reading skills linked to “higher intelligence” in young adults* [WWW Document]. URL <https://www.medicalnewstoday.com/articles/280193>
- Phelan, M., Slade, M., Thornicroft, G., Dunn, G., Holloway, F., Wykes, T., Strathdee, G., Loftus, L., McCrone, P., Hayward, P., 1995. *The Camberwell Assessment of Need: The Validity and Reliability of an Instrument to Assess the Needs of People with Severe Mental Illness*. British Journal of Psychiatry 167, 589–595. <https://doi.org/10.1192/bjp.167.5.589>
- Ritchie, S.J., Bates, T.C., Plomin, R., 2015. *Does Learning to Read Improve Intelligence? A Longitudinal Multivariate Analysis in Identical Twins From Age 7 to 16*. Child Development 86, 23–36. <https://doi.org/10.1111/cdev.12272>
- Бергер, П., Лукман, Т., 1995. *Социальное конструирование реальности. Трактат по социологии знания*. Медиум, Москва.
- Шютц, А., 2003. *Смысловая структура повседневного мира: очерки по феноменологической социологии*. Институт Фонда «Общественное мнение», Москва.

## Աբստրակտ

Հայ հասարակությունը, բնութագրվելով որպես համեմատաբար պահպանողական, շարունակում է ակտիվորեն շրջանառել գենդերային կարծրատիպերի մոդելներ, որոնց համաձայն կանանց և տղամարդկանց վերագրվում են որոշակի գենդերային դերեր և նորմեր: Այս առումով գենդերային հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն, հատկապես այն միջավայրերում, որտեղ կին-տղամարդ դերերի ստանդարտ բաշխումը վտանգում է ինչպես կնոջ, այնպես էլ տղամարդու ինքնիրացման հնարավորությունները:

«Խմբային տների կարիքների գնահատման գենդերային համատեքստը» վերնագրված այս ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտել Հայաստանի Հանրապետությունում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց համար ստեղծված չորս խմբային տների բնակիչների կարիքների գենդերային բնութագրերը: Այն նաև մտադիր է վերլուծել այդ խմբային տներում նրանց մատուցվող ծառայությունների գենդերային զգայունությունը: Աշխատանքը միտված է խմբային տներում ապրող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց կարիքների առավել հասցեական բավարարմանը, նրանց ինքնիրացման հնարավորությունների մեծացմանն ու նորերի զարգացմանը, ինչպես նաև նրանց կյանքի որակի բարելավմանը:

**Բանալի բառեր.** խնամքի տուն, խմբային տուն, անձնական տարածք, աշխատանք, գենդերային դերեր, սոցիալականացում, գենդերային կարծրատիպեր, ինքնախնամք, բռնություն

## Abstract

[The Armenian society, being characterized as relatively conservative, continues to actively circulate models of gender stereotypes, according to which women and men are assigned certain gender roles and norms. In this regard, gender relations are crucial, especially in environments where the standard distribution of female-male roles jeopardizes both female and male self-realization opportunities.](#)

This study entitled as “Gender Context of Needs Assessment of Group Homes” aims to identify the gender characteristics of the residents’ needs of four Group Homes created for people with mental health issues in the Republic of Armenia. It also intends to analyze the gender sensitivity of the services provided to them within those Group Homes. The work is aimed at meeting the needs of people with mental health issues living in Group Homes in a more targeted way, increasing their self-realization opportunities and developing new ones, as well as improving their quality of life.

**Keywords:** care home, group home, private space, work, gender roles, socialization, gender stereotypes, self-care, violence